24 ՅՈՒՆԻՍ 1999 ՀԻՆԳՇԱԲԹԻ # 116 (1861)

Ազգ

Azg
armenian daily

ՆԱՏՕ-ն կարող է ռազմական գործողություն իրականացնել միշտ եւ ամենուր

ԲԵԼԳՐԱԴ, 23 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ-ՏԱՍՍ: ՆԱՏՕ-ն, եթե պահանջվի, կարող է հարավսլավականի նման ռազմական գործողություն իրականացնել «ցանկացած ժամանակ եւ ցանկացած վայրում, լինի Ալժիրում, թե Կենտրոնական Եվրոպայում», հայտարարել է նախագահ Բիլ Քլինթոնը Մակեդոնիայի մայրաքաղաք Սկոպիեի մոտ գտնվող ռազմական օդանավակայանում ամերիկյան զորախմբի հետ կայացած հանդիպման ժամանակ:

Հարավսլավիայի դեմ ՆԱՏՕ-ի մղած օդային պատերազմի մասին նախագահ Քլինթոնը հայտարարեց. «Մենք հպարտանում ենք այնտեղ մեր արածով, որովհետեւ դա այն է, ինչը պաշտպանում է Ամերիկան»: «Ոչ ոք չպետք է պատժվի կամ խտրականության ենթարկվի, սպանվի կամ երկրից վտարվի իր կրոնական հայացքների կամ ազգային պատկանելության պատճառով», ասել է Քլինթոնը:

ՆԱՏՕ-ի ռմբակոծումների սկզբից հետո Կոսովոյից հեռացած 800 հազար ալբանացիներից վերադարձել է 170 հազարը:

Մինչդեռ շարունակվում է սերբերի զանգվածային ելքը Կոսովոյից: Անցած շաբաթվա ընթացքում, ՄԱԿ-ի գաղթականների գործերով կոմիսարի վարչության տվյալներով, Կոսովոյից մոտ 60 հազար սերբեր են հեռացել

ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մանր եւ միջին գործարար խավը հարվածի տակ

Հարկահավաքման նորույթը դեռ չմոռացված հինն է
Պարտադիր կանխավճարները դարշյալ օրակարգում

ՆԱՐԻԿԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ

Նոր կառավարության վեցամսյա գործունեության ծրագրի վերլուծականում ամրագրված է, որ ընթացիկ տարվա հարկային եկամուտների կատարումը լուրջ հարցականի տակ է գրեթե բոլոր հիմնական հարկատեսակների գծով: Այսպես ավելացած արժեքի հարկի գծով չի հավաքվել 4,4 մլրդ դրամ, акցիզների 3,7... Սակայն նորակազմ նախարարության ղեկավար Սմբատ Այվազյանը, որն այսուհետ պետական եկամուտների գլխավոր պահապանն է, «Ազգին» հավաստիացրեց, թե մինչեւ կիսամյակի վերջ հարկային տեսչությունը կապահովի բյուջետային եկամուտների իրեն վերապահված ցուցանիշների կատարումը, ինչը կանխատեսելի չէ մախային տեսչության պարագայում: Խրախուսելի հանգամանք, սակայն եւ նախկին վարչապետ Արմեն Դարբինյանը, եւ հարկային տեսչության պետ Սմբատ Այվազյանը, որն այժմ պետական եկամուտների նախարարն է, միաբերան հավաստացրին, որ հարկային վարչարարության բարելավման ուղղությամբ արված է գրեթե առավելագույնը, եւ բավարար եկամուտների հավաքումը երաշխավորելու համար անհրաժեշտ է տնտեսական աճ ապահովել:

Տես էջ 2

ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳ

Եվրամիությունը հունիսի 22-ը նվիրեց Կովկասին

Լյուքսեմբուրգի Մեծ Դքսությունում հունիսի 22-ին կայացել է Եվրոպական միության խորհրդի լիազումար հանդիպումը, որի ընթացքում տեղի է ունեցել Անդրկովկասյան երեք պետությունների եւ Եվրամիության միջեւ գործընկերության ու համագործակցության համաձայնագրի ուժի մեջ մտնելու հանդիսավոր արարողությունը: Մասնակցել են Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանը, Վրաստանի նախագահ Էդուարդ Շեւարդնաձեն եւ Ադրբեջանի վարչապետ Արթուր Ռասիզադեն: Դեռեւս 1995 թ. դեկտեմբերի 15-ին ստորագրված այս համաձայնագիրը կսկսի գործել 1999 թ. հուլիսի 1-ից: Բացման խոսքով հանդես է եկել Եվրամիությունում նախագահող երկրի Գերմանիայի արտգործնախարար Յոշկա Ֆիշերը: Նա նշել է, որ դեռի Արեւելք ԵՄ ընդարձակմանը զուգընթաց էլ աճավել են կարեւորվում Եվրամիության եւ Սեւ ծովի տարածաշրջանի երկրների հարաբերությունները: Այդ տարածաշրջանի կայունությունն ու խաղաղությունն ավելի ու ավելի կարեւոր է դառնում Եվրոպայի անվտանգության համար: Նա հույս է հայտնել, որ ստորագրված պայմանագրի հետեւողական իրագործումը մի նոր սկիզբ կլինի թե այդ երկրների եւ ԵՄ հարաբերությունների, թե տարածաշրջանում համագործակցության զարգացման համար: Անդրկովկասյան երեք երկրների հետ պատրաստվել է համատեղ հայտարարություն, որի նպատակն է ԵՄ մասնակցությամբ խթանել խաղաղական եւ տնտեսական հարաբերությունները: Այս համաձայնագիրը- առաջադիմ համագործակցության համար լավ օրենսդրական հիմք է ստեղծում:

Տես էջ 3

Ռուս սահմանապահների նոր հրամանատար Հայաստանում

ՏԻԳՐԱՆ ԱԲԼՈՅԱՆ
ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ի թղթակից
«Ազգի» համար

Գեներալ-լեյտենանտ Միխայիլ Վասիլեւիչ Նայմիլոն այս է Ռուսաստանի Դաշնության սահմանապահ դաշնային ծառայության (ՍՊԾ) Հայաստանում օդերեւութային խմբի նոր հրամանատարի անունը: Նա 41 տարեկան է, մինչ այս նշանակումը ծառայել է ՌՊ սահմանապահ զորքերի հեռավոր-արեւելյան օկրուգի շտաբի պետ: Գեներալ Մ. Նայմիլոն կփոխարինի գեներալ-մայոր Եվգենի Պոտեխինին, որն արդեն երեք տարի ծառայում էր մեր հանրապետությունում իբրեւ ՌՊ սահմանապահ զորքերի «Հայաստան» զորախմբի հրամանատար, վերջերս այդ զորախումբը վերակազմավորվել է ՌՊ ՍՊԾ օդերեւութային խմբի, սանալով ինքնուրույն միավորի կարգավիճակ, անմիջապես ենթարկվելով Մոսկվային: Գեներալ Եվգենի Պոտեխինը ՌՊ նախագահի հրամանագրով նշանակում է ստացել ՌՊ ՍՊԾ գլխավոր շտաբի պետի տեղակալ, վարչության պետ: Հիշեցնենք, որ ՌՊ գեներալը հայ-ռուսաստանյան ռազմական համագործակցության զարգացման մեջ ներդրած մեծ ավանդի համար անցյալ տարվա մայիսին ՀՀ նախագահի հրամանագրով պարգեւատրվել է «Մարտական ծառայությունների համար» մեդալով: Նա Հայաստան էր եկել 1996 թ. հուլիսին, մինչ այդ անցնելով սահմանապահ ծառայության բոլոր աստիճաններով, սկսած ուղեկալի պետի տեղակալի պաշտոնից: 46-ամյա Եվգ. Պոտեխինը ծառայել է հյուսիս-արեւելյան, հեռավոր-արեւելյան, միջինասիական սահմանապահ օկրուգներում, եղել է Աֆղանստանում:

Ռուսաստանը ափսոսանք է հայտնել Բաքվի մերկաղարանոց հայտարարությունների առթիվ

ՄՈՍԿՎԱ, 23 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Նմանօրինակ կարգի ողբերգական իրադարձությունները, ովքեր էլ լինեն նախաձեռնողը, մի ավելորդ անգամ ապացուցում են հակամարտության մեջ ներքաշված կողմերի անմիջական բանակցությունների միջոցով շուտափույթ դարաբաղյան հիմնախնդրի կայուն ու համապարփակ կարգավորմանը հասնելու անհրաժեշտությունը»: Այսօր պատասխանելով ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ի թղթակցի հարցին, հայտարարեց Ռուսաստանի արտգործնախարարության տեղեկատվության եւ գրահրատարակչության դեպարտամենտի տնօրեն Վլադիմիր Ռախմանինը, ժեկնաբանելով վերջերս տեղի ունեցած զինված ընդհարումները դարաբաղյան հակամարտության գոտում, որը մարդկային զոհեր էր խլել, ինչպես նաեւ դրա շուրջ հրապարակային վիճաբանության հետագա սրումը:

«Ռուսաստանը որպես ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահներից մեկը, այսուհետեւ էլ հանդես կգա անաչառ միջնորդի դերում, որն անկեղծորեն ձգտում է օգնել Բաքվին, Երեւանին եւ Ստեփանակերտին՝ հասնելու վճռական ծեղքման իսկական հաշտության ճանապարհին»:

Ռուսաստանյան կողմը հակամարտության կողմնակիցներին կոչ է անում առավելագույն զսպվածություն դրսեւորել իրենց հրապարակային հայտարարություններում: «Ափսոսանք է հարուցում մասնավորապես այն հանգամանքը, որ ադրբեջանական կողմը փորձեց հունիսի 14-ի միջադեպն օգտագործել քարոզչախոսական պատերազմն ուժեղացնելու, մասնավորապես Անդրկովկասում Ռուսաստանի վարած խաղաղասիրության շուրջ մերկապարանոց հերյուրանքներ տարածելու համար», ընդգծեց ՌՊ արտգործնախարարության պաշտոնական ներկայացուցիչը

Օջալանը պատրաստակամ է ավանդ ներդնելու «քրդական հիմնախնդրի» լուծման հարցում

ԱՆԿԱՐԱ, 23 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ-ՏԱՍՍ: Անկարայի պետական անվտանգության դատարանը մերժել է Աբդուլլահ Օջալանի դատապաշտպաններին Քրդական աշխատավորական կուսակցության առաջնորդի դատավարությունը հետաձգելու պահանջի հարցում: Դատարանի այս որոշումը հրապարակել է դատավարությունում նախագահող Թուրգութ Օքյայը:

Դատավարությունը, որը տեղի է ունենում Մարմարա ծովի Իմրալը կղզում, այսօր վերսկսվել է 15-օրյա ընդմիջումից հետո: Այս ժամկետն ամբաստանյալին տվել էր պաշտպանության նախապատրաստման համար:

Դատական նիստի նախօրյակին Օջալանի ինքնապաշտպանության ճարտարապետները մամուլին են հանձնել նրա դատապաշտպանները: Դանում բերված են ավելի վաղ նրա արած հայտարարությունները, այդ թվում նաեւ «Քրդական հիմնախնդրի» լուծման հարցում ավանդ ներդնելու պատրաստակամության մասին, եւ մերժվում են իր հասցեին արված մեղադրանքները

խաղաղ խաղաղասիրների նկատմամբ բռնության ակտերի կատարման հրամաններ տալու մեջ:

Ինչպես այսօր հայտնի է դարձել, Օջալանի եղբայր Օսմանը, որը Քրդական աշխատավորական կուսակցության ղեկավար խորհրդի անդամ է, դատարանին կոչ է արել մեղմացնել հուրդ առաջնորդի պատիժը:

ԲՈՍՏՈՆ

Արցախում բացվելու է եւս 8 եկեղեցի, հավաստիացնում է Պարգեւ Սրբազանը

ԲՈՍՏՈՆ, ՀԱՏՈՒԿ ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆ «ԱԶԳԻՆ»: Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արք. Սարգիսյանը Բոստոնի «Շերաթոն-Քոմենդոր» հյուրանոցում հունիսի 21-ին տված ասուլիսում հպարտությամբ ամփոփելով անցնող 10 տարվա ընթացքում Հայաստանի ու Դարաբաղի ժողովրդի ձեռք բերած հաջողությունները, հավաստիացրեց, որ այս տարվա մնացած ամիսներին եւս 8 եկեղեցի է վերաբացվելու Արցախում: Այնուհանդերձ նա շեշտեց, որ դեռեւս հակայածավալ աշխատանք կա անելու: Սրբազանը հիշեցրեց, որ Խորհրդային Ադրբեջանի գերիշխանության 7 տասնամյակների ընթացքում Արցախում ոչ մի եկեղեցի չէր գործում, չկար թեմ եւ առաջնորդարան: Սակայն թեմի ստեղծման 10-ամյակն այդքան կարեւոր իրադարձություն է մեր ժողովրդի համար: Հիշեցնենք, որ այս գործում կարեւոր են նաեւ իր որոշեն թեմի առաջնորդի կատարած աշխատանքները, ինչի գնահատումն էր Մ. Նահանգներ մեկնելուց առաջ Գարեգին Ա կաթողիկոսի կողմից իրեն շնորհված արքության տիտղոսը: Սրբազանն ասուլիսի ընթացքում կոչ հղեց բոլոր հայերին առաջիկա սեպտեմբերի 26-ին Դարաբաղ գալ մասնակցելու Վարագա խաչի տոնախմբությանը, ինչպես նաեւ Գանձասարի պատմական վանքում աստվածաբանական ճեմարանի բացման արարողությանը: Ճեմարանը, որի նվիրատուն է Նյու Ջերզիից ազգային բարերար Վահագն Հովնանյանը 320 հազար դոլար նվիրատվությամբ, կարեւոր կենտրոն է դառնալու հոգեւորականներ պատրաստելու գործում: Սրբազանն ասուլիսում նշեց նաեւ, որ նպատակ ունի տեղում ստեղծելու ռադիոհեռուստատեսային ծրագրեր ժողովրդի



հոգեւոր կարիքներին հասնելու նպատակով

Տես էջ 3

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՈՒՇԱԳԻՐ

ՀՐԱՆՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ-ՔԽ ստեղծումն իշխանափոխության տրամաբանական «հետեւանքներից» էր: Նախագահին առընթեր գործող այդ մարմինը բավական լուրջ ծրագրեր ուներ միջկուսակցական համագործակցության եւ ինտեգրացիոն գործընթացների. Հայաստանում գրանցված հասարակական-քաղաքական կազմակերպությունների ներուժի օգտագործման, ազգային փոքրամասնությունների հետ երկխոսության ուղղությամբ: Հստակ անելիքներ կային խորհրդարանական ընտրությունների, Ընտրական օրենսգրքի արտախորհրդարանական քննարկումների, ընտրությունների դարձ մեղադրանքների մթնոլորտը, առավել նրբանկատ մոտեցում էր պահանջում: Կարելի է տարբեր փաստարկներ բերել ինչպես այդ կառույցի պահպանման, այնպես էլ լուծարման օգտին: Կարծում եմ, սակայն, որ արժեր լսել հատկապես այն կուսակցությունների կարծիքը, որոնք ներկայացված չեն խորհրդարանում: Հայաստանում գրանցված ավելի քան 80 կուսակցությունների ներուժի բացահայտման խնդիրը չպետք է անտեսվի առնվազն «երկայր» շահարկումները բացառելու տեսակետից. մի կողմից, թե այդ կուսակցությունները գոյություն ունեն միայն թղթի վրա, մյուս կողմից թե գոյց է տալիս, որ «ներքեւից» եկած գաղափարը պետք է յուրացնի եւ առաջ տանի ղեկավարությունը, հակառակ դեպքում տարալվում է:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՂԱՍԱԼՅԱՆ-Մեր կազմակերպությունը ՔԽ գաղափարի կրողներից մեկն էր եւ այսօր էլ համարում է, որ խորհուրդը մեծ աշխատանք կատարեց եւ հետագայում էլ կարեւոր դեր կխաղար երկրի քաղաքական կյանքում, եթե ընդլայներ իր կազմը ընդգրկելով խորհրդարանում ներկայացված կուսակցություններին: Աժ ընտրություններով հարցերը չլուծվեցին, խորհրդարանից, ցավոք, դուրս մնացին բարձր մտավոր եւ մարդկային ներուժ ունեցող քաղաքական ուժերի համար հասարակական տրամադրությունները նախագահին մատուցող խորհրդատվական մարմնի «կարգավիճակում»: ՔԽ լուծարման փաստը եւ նոպատակահարմարությունը մեկնաբանում են Աժ «Իրավունք եւ միաբանություն» խմբակցության անդամ, ՍԻՄ նախագահ Հրանտ Խաչատրյանը եւ խորհրդարանում մեկ պատգամավորով (Աղասի Արզակյան) ներկայացված ԳԻԱՐՔՄի-ի նախագահ Ալեքսանդր Աղամալյանը:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

Քաղաքական խորհուրդն ավելորդ էր

Խորհրդարանական ընտրությունների «համազարկերը» լռեցին, եւ վարչապետի նշանակման եւ նոր կառավարության ձեւավորման «հուզիչ» գործընթացից հետո մի տեսակ աննկատելի լուծարվեց նախագահին առընթեր Քաղաքական խորհուրդը, որ համագործակցության օգտակար դաշտ էր ապահովում խորհրդարանական կուսակցությունների եւ, որ ավելի կարեւոր է, խորհրդարանում չներկայացված, բայց երկրի քաղաքական կյանքում անելիք եւ հասարակությանն ասելիք ունեցող քաղաքական ուժերի համար հասարակական տրամադրությունները նախագահին մատուցող խորհրդատվական մարմնի «կարգավիճակում»: ՔԽ լուծարման փաստը եւ նոպատակահարմարությունը մեկնաբանում են Աժ «Իրավունք եւ միաբանություն» խմբակցության անդամ, ՍԻՄ նախագահ Հրանտ Խաչատրյանը եւ խորհրդարանում մեկ պատգամավորով (Աղասի Արզակյան) ներկայացված ԳԻԱՐՔՄի-ի նախագահ Ալեքսանդր Աղամալյանը:

նախապատրաստական աշխատանքների ոլորտում, եւ, պիտի ասեմ, որ 1998 թ. սեպտեմբերին ձեւավորվելով, խորհուրդը երկու ամիս շատ արդյունավետ գործունեություն ծավալեց:

Սակայն դեկտեմբերի սկզբին պարզ դարձավ, որ իշխանությունների կողմից հետեւողական աջակցություն չի սպասվում այդ ծրագրերին, նախագահը նույնիսկ մեղադրեց ՔԽ-ին իրեն չվերաբերող հարցերին, կառավարության գործունեությանը միջամտելու համար, թեպետ ՔԽ կանոնադրության մեջ, որ, ի դեպ, հաստատել էր նախագահը, ասվում էր, որ խորհուրդն իրավասու է ուսումնասիրություններ եւ եզրակացություններ կատարել կյանքի ամենատարբեր ոլորտների վերաբերյալ: Առարկություններ եղան նաեւ իմ, որպես ՔԽ գործադիր քարտուղարի չափազանց ակտիվության նկատմամբ: Արդյունքում ՔԽ-ը վերածվեց հերթական նոմենկլատուրային օղակի, որի տրամաբանական վախճանը լուծարումն էր լինելու:

Ինչպես ՔԽ ստեղծումից, այնպես էլ լուծարումից առաջ նախագահը հարկ չհամարեց խորհրդակցել կուսակցությունների հետ. ՔԽ վերջին նիստում, որին մասնակցում էր Ռոբերտ Քոչարյանը, այդ հարցը չքննարկվեց: Մինչդեռ խնդիրը, նկատի առնելով քաղաքական դաշտում առկա «անճշտությունները» եւ փոխադարձ մեղադրանքների մթնոլորտը, առավել նրբանկատ մոտեցում էր պահանջում: Կարելի է տարբեր փաստարկներ բերել ինչպես այդ կառույցի պահպանման, այնպես էլ լուծարման օգտին: Կարծում եմ, սակայն, որ արժեր լսել հատկապես այն կուսակցությունների կարծիքը, որոնք ներկայացված չեն խորհրդարանում: Հայաստանում գրանցված ավելի քան 80 կուսակցությունների ներուժի բացահայտման խնդիրը չպետք է անտեսվի առնվազն «երկայր» շահարկումները բացառելու տեսակետից. մի կողմից, թե այդ կուսակցությունները գոյություն ունեն միայն թղթի վրա, մյուս կողմից թե չափազանց մեծ ներուժ ունեն, որ չի օգտագործվում: Անհրաժեշտ է գտնել այն օղակը, որ թույլ կտա կիրառելու եւ ի շահ երկրի ներդնելու այդ ներուժը, եւ ՔԽ-ը կարող էր եւ պետք է լիներ այդ օղակը: Իշխանությունների կողմից հովանավորվող եւ կուսակցությունների նկատմամբ հոգատարություն ցուցաբերող մարմնի գոյությունն, ըստ իս, անհրաժեշտություն է: Ինչ ձեւով կամ ֆորմատով, որտեղ է եւ ինչ կանոնադրությամբ քննարկելու խնդիր է, որ կարող է նախաձեռնել, օրինակ, Աժ ղեկավարությունը: Նախաձեռնությունը պետք է որ իշխանությունները ցուցաբերեն, քանի որ փորձը ցույց է տալիս, որ «ներքեւից» եկած գաղափարը պետք է յուրացնի եւ առաջ տանի ղեկավարությունը, հակառակ դեպքում տարալվում է:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՂԱՍԱԼՅԱՆ-Մեր կազմակերպությունը ՔԽ գաղափարի կրողներից մեկն էր եւ այսօր էլ համարում է, որ խորհուրդը մեծ աշխատանք կատարեց եւ հետագայում էլ կարեւոր դեր կխաղար երկրի քաղաքական կյանքում, եթե ընդլայներ իր կազմը ընդգրկելով խորհրդարանում ներկայացված կուսակցություններին: Աժ ընտրություններով հարցերը չլուծվեցին, խորհրդարանից, ցավոք, դուրս մնացին բարձր մտավոր եւ մարդկային ներուժ ունեցող այնպիսի կուսակցություններ, ինչպես ՀՈԱԿ-ը, ՍԻՄ-ը, Դեմոկրատը եւ ուրիշներ, որոնք ՔԽ միջոցով կարող էին իրենց լուսան ներդնել պետական շինարարության գործում:

ՔԽ վերջին նիստում նախագահն ինքը կարեւորեց խորհրդի դերը միջկուսակցական հարաբերությունների առողջացման, նախընտրական շրջանում հանդուրժողականության մթնոլորտի ձեւավորման հարցում: ՔԽ հետագա ճակատագիրն, ըստ նախագահի, պայմանավորվելու էր խորհրդարանում ներկայացված կուսակցությունների մոտեցումներով: Կուսակցական վեց խմբակցությունների կարծիքը երեւի թե բացասական է եղել ՔԽ նոպատակահարմարության առնչությամբ: Կարծում եմ, նախագահն ինքը պետք է շահագրգռված լիներ այդ մարմնի պահպանմամբ. կուսակցությունները միշտ էլ կարող են ինքնակազմակերպվել, ՔԽ-ից դուրս կազմակերպական ձեւ գտնել համագործակցության համար: ԳԻԱՐՔՄի-ն, օրինակ, նոպատակահարմար է համարում միջկուսակցական խորհրդի ստեղծումը:

Հ. Գ.-Ավելացնենք, որ ՔԽ հատկապես վերջին ամիսների աշխատանքի արդյունավետության վերաբերյալ վերապահումներով հանդերձ ՔԽ գաղափարն ինքնին օգտակար է համարում նաեւ ՀՈԱԿ ատենապետ Ռուբեն Միրզախանյանը:

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մանր եւ միջին գործարար խավը հարվածի տակ

Սկիզբը էջ 1

Տնտեսական աճի ապահովումը պահանջում է համալիր միջոցառումներ եւ ֆինանսական ներդրումներ, ինչը մեկ-երկու ամսվա գործ չէ, ուստի մեծ է գայթակղությունը վերադառնալու տնտեսության կառավարման ուժային մեթոդներին: Կամ ինչպես սիրում էր բնորոշել հարկային տեսչության նախկին պետ Արտաշես Թումանյանը կտրել ծառի այն ճյուղը, որի վրա նստած ենք: Դրա դասական կենսագործումն, այսպես կոչված, կանխավճարների գանձումն է տնտեսվարողներից, ընդ որում որպես կանոն այն տնտեսվարողներից, որոնք պարտաճանաչորեն մուծում են օրենքով սահմանված հարկային բոլոր դրույքաչափերը: Հունիսը Երեւանում նշանավորվեց «Լավ մոռացված հին նոր ավիական է» կարգախոսի վերազարթոնքով: Այսպես, Արաբկիրի համայնքի հարկային տեսուչները սկսեցին շրջայց դեպի առեւտրային կետերը փոքր եւ միջին բիզնեսի հայաստանյան բազմաչարչար ներկայացուցիչներին առաջարկելով 100 հազար դրամ կանխավճարներ մուծել: Տագնապահար տնտեսվարողները ներկայացնում են փաստաթղթեր, որոնց հիման վրա ապացուցվում է նրանց կարգադրի հարկատու լինելը, բայց հարկային տեսուչների պատասխանը մեկն է. այս գումարը բյուջեի մուտքերը լրացնելու համար է եւ տարեվերջին կհանվի ձեր մուծելիք հարկերի գումարից: Ամառային այս շրջանում, երբ առեւտրաշրջանառության ծավալները գնալով նվազում են, փոքր եւ միջին ձեռներեցի համար 100 հազար դրամ շրջանառությունից հանելը հավասարազոր է աղետի:

Ռաֆիդ Ենգիբարյանի եւ Միխայել Մակարյանի տրված ուղիով

Հայաստանյան տնտեսվարողների հիշողության մեջ թարմ է Երջանիկ Աբգարյանից հետո մամային վարչության պետ դարձած Ռաֆիդ Ենգիբարյանի եւ ապա նրան հաջորդած Միխայել Մակարյանի գործելակերպը, որոնք շրջանառության մեջ դրեցին չարաբաստիկ կանխավճարների գանձման սկզբունքը, որն, ի դեպ, օրենսդրական ոչ մի հիմք չունի: Վերոհիշյալ երկու գործիչներն էլ ազատվեցին հարկահավաքի իրենց պաշտոններից նաեւ այս պատճառաբանությամբ: Հիշեցնենք, որ Ռաֆիդ Ենգիբարյանն իր պաշտոնավարությունը սկսեց Ռոբերտ Քոչարյանի վարչապետության օրոք: Հայաստանի համար ֆինանսատնտեսական բավական ծանր ժամանակաշրջանում, երբ բյուջեի դեֆիցիտը մերձենում էր 40 մլրդ դրամի, իսկ սվերային տնտեսության ծավալները գնալով ընդլայնվում էին: Կանխավճարների այս սկզբունքով հնարավոր եղավ բավական կարճ ժամանակընթացում լցնել բյուջեն, բայց կարճաժամկետ այս դական հետեւանքը վերածվեց երկարաժամկետ բացասական արդյունքի: Փակվեցին զգալի թվով փոքր ու միջին ոչ միայն առեւտրային, այլեւ անգամ արտադրական ձեռնարկություններ, հարկային դաշտը նեղացավ: «Ռազմական կոմունիզմի» ժամանակներից կառավարությունը կտրուկ անցում կատարեց դեպի նեղ, այսինքն՝ բաղձալի ազատականություն:

Այսօր ֆինանսատնտեսական իրավիճակը վերսին վարդագույն չէ, եւ բյուջեի դեֆիցիտը շուրջ 20 մլրդ դրամի է հավասար, միջազգային ֆինանսական կազմակերպությունները հաղաղում են տրամադրել այդ դեֆիցիտի ծածկման դրամաշնորհներն ու վարկերը, քանզի նոր կառավարության հետ նրանք լուրջ ծրագրեր ունեն քննարկելու: Իրենց հայտնի պահանջներով, ինչի առաջին արտահայտությունը վեցամսյա ծրագրում նախանշված բենզինի եւ ծխախոտի հարկային դրույքաչափերի բարձրացումն է: Նշենք, որ Ռուսաստանում իրավիճակը համահունչ է, այստեղ եւս Համաշխարհային բանկի եւ Միջազգային արժութային հիմնադրամի ներկայացուցիչները պահանջում են հարկային դրույքաչափերի բարձրացում, ինչպես նաեւ ծառայությունների սակագնային այնպիսի քաղաքականություն, երբ այդ սակագները հավասարեցվում են միջազգային չափանիշներին առանց համապատասխան սոցիալական մեղմիչների: Պարզ ասած նվազագույն եւ միջին աշխատավարձի չափերն ու կենսաթոշակները հարյուրապատիկ ցածր են համաշխարհային չափանիշներից, համարժեք չեն անգամ նվազագույն սպառողական զամբյուղին, բայց սակագները աճում են եվրոպական եւ ամերիկյան չափանիշներով, ընդ որում դրանց հաշվարկը անպայմանորեն կատարվում է տարադրամով: Ռուսաստանի Պետդուման մերժեց բենզալցակայաններից գանձվող հարկերի բարձրացումը, ինչպես նաեւ էներգակիրների հարկային դրույքաչափերի աճը: Մեզանում նման քննարկումներ նոր-նոր պետք է սկսվեն, բայց կանխավճարների գանձումն արդեն սկսված է, ինչը պետական եկամուտների նորակազմ նախարարությանը պետք է մղի վճռական գործողությունների, հակառակ դեպքում հետեւանքները կարող են շատ ավելի մեծ վնաս հասցնել տնտեսական դաշտին, քան այսօրվա հարկահավաքման թերակատարումը:

Արեւը մանուկների աչքերով երբեք չի խամրում

Ղարի-Մարաշ համայնքի գեղատեսիլ բարձունքում է գտնվում կենսաթոշակառուների սոցիալական սպասարկման կենտրոնը, ուր ապրում, լիարժեք սնունդ ու բուժօգնություն են ստանում 220 տարեց մարդիկ: Այս տարի կառավարության բյուջեով նախատեսվել է 126 միլիոն դրամ հատկացնել ծերանոցին, որն էլ ամեն ամիս գրեթե վճարվում է մասնակի փոփոխություններով. տեղեկացրեց կենտրոնի տնօրեն Ս. Ալոյանը:

Երեկ այդ կենտրոնում առաջին անգամ տեղի ունեցավ «Մանկության աստղեր» փառատոնը, որը կազմակերպել էր Նորք-Մարաշ համայնքի կրթության, մշակույթի, սպորտի եւ առողջապահության բաժինը տկն Բյուփելյանի գլխավորությամբ: Նպատակը մեկն էր, մեր նախակրթարանի երեխաների մեջ դաստիարակել սեր ու ուշադրություն մեծերի ու շրջապատի նկատմամբ: Երեխ ու կես ժամ բեմը ողողվել էր մանկական երգ ու պարով, ասմունքով: Մեկը մյուսի հետեւից բեմ էին բարձրանում համայնքի թիվ 53 (տնօրեն՝ Կարմեն Հովհաննիսյան), թիվ 142 (տնօրեն՝ Անահիտ Միրզոյան), թիվ 57 (Օվսաննա Մակարյան), թիվ 168 (Թամար Հովհաննիսյան) նախակրթարանների եւ «Օլիմպոս» կրթահամալիրի (Վահրամ Գրիգորյան) սաները՝ երջանիկ ապագայի, անհոգ մանկության խորհրդանիշը կրող դրոշով: Անդրանիկ փառատոնն ավարտվեց դեղնակտուց աղավնիների տեսքով զգեստներ հագած սաների հրաբալի պարով, ավարտին էլ հենց գույնզգույն ժապավեններով զարդարված վանդակից օդ բաց թողնվեցին երկու ճերմակ աղավնիներ՝ ի նշան պարզության, մանկան ազնվության ու մաքրության:

Միջոցառմանը ներկա էին տարեցները, որոնց համար մի քանի անգամ իրենց իսկ խնդրանքով կկազմակերպվեն նման միջոցառումներ: Մասնակցում էին եւ շնորհակալական ու շնորհավորանքի խոսքեր ասացին կրթության նախարարությունից տկն Լիլոյանը, տկն Սարգսյանը, Կենտրոն համայնքի կրթության բաժնից Ս. Հովհաննիսյանը, Մարգարյանը, քաղաքապետարանի կրթության վարչության պետ Ս. Խրիմյանը, Նորք-Մարաշ համայնքի նախկին քաղաքպետ Ա. Արմենակյանը, քաղաքապետի ժամանակավոր պաշտոնակատար Վարազդատ Մկրտչյանը:

Սեպտեմբերի 1-ին համայնքի 300 սաներ ոտ կդնեն առաջին դասարան, բայց երբեք չեն մոռանա տարեցներին, որոնց խոսքացան հաճախ հյուր գնալ:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակվում է տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի խմբագիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Թելեֆոն 529353, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ԳՐԻԳՈՐ ՁՈՐԵԱՆ / հեռ. 562863
Համակարգչային
ծառայություն / 562941
Apple Macintosh
համակարգչային շարվածքը
«Ազգ» թերթի
Նյութը «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն
վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՈՒՂՂԱԳԻՐ

1700-ամյակից առաջ պետք է կանգ առնել 2000-ամյակի վրա

Վերջերս առաջին պաշտոնական այցով Հայաստան էր այցելել Կ. Պոլսի Հայոց ամենապատիվ Տ. Մեսրոպ Բ պատրիարքը պոլսահայ համայնքի ակնառավոր ներկայացուցիչներից կազմված պատվիրակության ուղեկցությամբ: Պատրիարքը Մայր աթոռում մասնակցեց Գերագույն հոգևոր խորհրդի նիստերին, հանդիպեց հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանին, ինչպես նաև այցելեց գիտությունների ազգային ակադեմիա, Երևանի պետական համալսարան եւ Մատենադարան: Ներկայացնում ենք պատրիարքի մեր թղթակցին տված հարցազրույցը:

- Ի՞նչպե՞ս եք գնահատում 2001 թ.-ին 1700-ամյակը տոնելու նախապատրաստական աշխատանքները:

- Ես միշտ մը սկեպտիկ եմ 1700-ամյակի առիթով, որովհետեւ արդեն քանի մը տարի է, որ ծամոնի վերածվեցավ այս 1700-ամյակը: Շատ բաներ 1700-ամյակի պիտակից տակ կըլլան, որոնք կապ չունին: Այսուհանդերձ մեր շատ կարող հոգեւորականներեն մեկը՝ Գեր. Տ. Մեսրոպ արք. Աշճյանը կգլխավորե այդ գրասենյակը եւ կտեսնեմ, որ նաեւ լավ աշխատանքներ կատարվին: Իմ փափագն է, որ 1700-ամյակը չըլլա սոսկ ոգեւորվելու պատճառ եւ ընելու այն բաները, որոնք արդեն պիտի ընեինք առանց 1700-ամյակի: Այդպիսիք են, օրինակ, եկեղեցիների վերաշինությունը, գրքերի հրատարակությունը եւ այլն: Ամենեն կարեւոր գործը, որ կըլլա, հոգեւոր ոլորտի մեջ է: Ուխտագնացությունները շատ կարեւոր են, երիտասարդներու եւ պատանիներու ներգրավումը խիստ կարեւոր զանազան ուխտատեղիներ այցելելու, որովհետեւ ես պիտի փափագեի, որ 1700-ամյակը ամեն բանե առաջ լինի հոգեւոր նորոգության եւ արմատները որոնելու առիթ մը: Բայց 1700-ամյակեն առաջ մենք պետք է կանգ առնենք քրիստոնեության 2000-ամյակին վրա: Մենք նախ աշխարհով մեկ ապրող բոլոր քրիստոնյա ազգերուն պետք է ըսենք, որ մենք ալ իրենց հետ նույն հավատալիքները կբաժնենք: Եթե այդ համաքրիստոնեական քարտեզի վրա տեղ չունենանք, 1700-ամյակը ոչ մեկ բան պիտի նշանակե նրանց համար:

Ուստի Գերագույն հոգեւոր խորհուրդը առավ որոշում եւ կարեւոր քայլ ու թելադրեց Մայր աթոռին, որ ստեղծվի մի նոր հանձնաժողով անմիջապես ձեռնարկելու 2000-ամյակի շարք մը պատրաստությանց: Եվ հատկապես պետք է շեշտել նախապատրաստական ճանաչումն էր հայոց թագավորության կողմե 2000 թ.-ին մենք նախ ճշտելու ենք մեր դերը եւ տեղը քրիստոնեական քարտեզի վրա, որուն պետք է հետեւի 1700-ամյակը, որի համար արդեն քանի մը տարիե ի վեր պատրաստություններու մեջ ենք:

- Իսկ թուրքահայ գաղութն ինչպե՞ս է նշելու այդ հոբելյանը:

- Մենք արդեն իսկ պատրաստած ենք կարեւոր ուղեցույց 2000-ամյակի համար, եւ մեր ազգային վարժարաններուն հրահանգված է, որ կրոնի, պատմության եւ հայերենի դասերուն ընթացքին հատկապես մեր աշակերտներուն փոխանցվին այս գիտելիքները եւ մշակվի այս առարկան նախագրիգորյան շրջանի քրիստոնեությունը հայ ժողովուրդի մեջ: Ասոր առընթեր մենք այս տարիեն կսկսինք զարկ տալ ուխտագնացություններուն Անատոլուի մեջ (Արեւմտյան Հայաստան- խմբ.) բազմաթիվ վայրերում, ուր Պողոս, Պետրոս, Հովհաննես, Փիլիպոս առաքյալները առաքելական գործ ծավալած են: Ասոնց առընթեր այս տարի եւ հաջորդ տարի հատուկ հանդիսություններ պետք է կատարվեն Կեսարիո մեջ, ուր մեր հավատի հայրը 301 թ.-ին Հայոց մեծաց հայրապետ ձեռնադրվեց Կեսարիո մետրոպոլիտին կողմե: Այդ վայրում դեռ կանգուն հայ եկեղեցի կա սբ. Գրիգոր Լուսավորիչ, եւ այդտեղ լինելու է կարեւոր տոնախմբություն 2001 թ.-ին 1700-ամյակի առիթով: Բնականաբար նաեւ պիտի ըլլան հատուկ երեկոներ, գիտաժողովներ:

- Ինչպե՞ս է այժմ պոլսահայ գաղութի վիճակը:

- Իբրեւ կրոնական համայնք՝ ոչ մեկ պրոբլեմ ունի. բոլոր եկեղեցիները բաց են: Թուրքիո մեջ բացարձակ կրոնական ազատություն կա: Սակայն իբրեւ ազգային փոքրամասնություն ունինք խնդիրներ եւ անոնք կնմանին մյուս ազգային փոքրամասնություններուն ուրիշ երկրներու մեջ: Համայնքային պրոբլեմներ ունինք, որոնք ի մասնավորի կալվածային բնույթ ունին: Սակայն պետք է տեսնել, թե Թուրքիո նոր կառավարությունը ինչպիսի տարբերե պետք է բաղկանա: Այդ լեզու պետք է գտնել եւ փորձեր կատարել մեղմացնելու կարգ մը հարցերը: Մեր հարցերը մշակութային ալ չեն այնքան, որովհետեւ ազատ ենք միութենական կյանքն ունենալ մեր ուզած տեղը եւ ժամանակը: Կալվածային խնդիրներ կան: Կա 1936-ի ցանկ մը, եւ որոշ կառավարական գրասենյակներ կընդեն, որ այդ ցանկին մեջ չարձանագրված կալվածներ կարելի չէ, որ սեփականություն լինեն փոքրամասնություններուն: 1936-ին ցանկեն դուրս մնացող բոլոր սեփականությունները պահանջվում է, որ արտասեփականացվին եւ փոխանցվին հին տերերուն: Այս հարցին վրա պետք է աշխատինք նոր կառավարության հետ:

- Թուրքիայում հարգվո՞ւմ են 1923-ի Լոզանի պայմանագրի ազգային փոքրամասնությունների իրավունքները փաստող կետերը, թե՞ ոչ:

- Լոզանի դաշնագրի գրեթե բոլոր իրավունքները մենք վայելում ենք այսօր, որովհետեւ ազգային դպրոցներ մենք չէինք կարող ունենալ, եթե եկեղեցիները բաց չլինեին: Անշուշտ մեկ բան կա. Լոզանի դաշնագիրը կըսե, որ եթե փոքրամասնությունները փափագին, կարող են նոր հաստատություններ բանալ: Այդ է, որ չարտոնվիր այսօր Թուրքիո մեջ: Բայց այդ ալ պայմանավորված է Հունաստանի մեջ թուրք փոքրամասնության դժվարություններով:

ՄԱՐԻԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԲՈՍՏՈՆ

Արցախում բացվելու է եւս 8 եկեղեցի

Սկիզբը էջ 1

Ներկաներն այնքան ոգեւորվեցին Պարգեւ սրբազանի խոսքերից, որ տեղում հավաքվեց շուրջ 50 հազար դոլար՝ հօգուտ նոր ծրագրերի իրագործման:

Խոսելով Վեհափառ հայրապետի առողջության մասին, Պարգեւ արքեպիսկոպոսն այն բնութագրեց կարճ՝ «Շատ վատ»:

Պատասխանելով մեկ այլ հարցի, թե Գարեգին Ա կաթողիկոսին մի բան պատահելու դեպքում արդյո՞ք Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանը կմիջամտի՞ նոր կաթողիկոսի ընտրությանը, ինչպես դա արեց նախորդ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը, Արցախի թեմի առաջնորդը նորից պատասխանեց կարճ՝ «Ոչ»: Մեկ այլ հարցի, թե կաթողիկոս ընտրվելու դեպքում Պարգեւ սրբազանն ի՞նչը կուզեր առաջին հերթին փոխված տեսնել հայ եկեղեցում, վերջինս պատասխանեց՝ «Պահը պատշաճ չէ այդ մասին խոսելու»: Իսկ որպես առհասարակ հայ եկեղեցական Պարգեւ սրբազանը հայտնեց, որ կուզենար ավելացած տեսնել Հայաստանում վանքերի եւ որակյալ եկեղեցականների թիվը: Երկրորդ՝ կուզենար եկեղեցական միասնական ծիսակատարություն տեսնել ողջ Հայաստանում, Արցախում եւ սփյուռքում: Չենք կարող Ստեփանակերտում տարբեր եւ, օրինակ, Բոստոնում տարբեր կատարել մկրտությունները: Երրորդ՝ ակնկալում է եկեղեցականների գործունեության ակտիվացում:

Վերջում սրբազանը պատասխանելով դարաբաղյան դիրքերի վրա ադրբեջանական վերջին հարձակմանը վերաբերող հարցին, առաջ քաշեց 3 պատճառ.

1) Տեսնել, թե ՆԱՏՕ-ն ինչպես է հակազդելու,

2) Քանի որ Ալիեւը հիվանդ է, արբեջանցիները ձգտում են ուշադրությունը շեղել այդ փաստից,

3) Հայաստանում «Արմենիկում» դեղամիջոցի հայտնագործումը, որը եթե տարածվի աշխարհում, շատ ավելի արժեքավոր կլինի, քան Ադրբեջանի նավթը:

Բոստոն ժամանելուց առաջ Պարգեւ սրբազանը մի քանի օրով այցելել էր Նյու Յորք: Երեւան վերադառնալուց առաջ Բոստոնից նա մեկնեց Լոս Անջելես՝ ուղեկցությամբ «Գանձասար» աստվածաբանական կենտրոնի տնօրեն տեր Մեսրոպ քահանա Արամյանի:

Չին ուսանողները կմասնագիտանան մեր կոնսերվատորիայում

Երեկ Երեւանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի եւ Չինաստանի դեսպանության միջեւ կնքվեց համաձայնագիր: «Երկու երկրների կրթական համակարգը միացնելու առաջին փորձն է», ասաց կոնսերվատորիայի ռեկտոր Արմեն Սմբատյանը եւ ավելացրեց, որ դա գնահատականն է մեր համակարգի: Չինաստանից ցանկություն են հայտնել գալ Հայաստան եւ սովորել մեզ մոտ, սակայն պրոֆեսիոնալ կրթություն:

Պայմանագիրը ստորագրվել է հինգ ուսանողի համար լարային բաժնում, երկուսը՝ ջութակ, երկուսը՝ թավջութակ եւ մեկը կոմպոզիտորական բաժնում: Մինչեւ այժմ Կոմիտասի անվան կոնսերվատորիան ունեցել է պայմանագրեր Նյու Յորքի, Մոսկվայի կոնսերվատորիաների հետ, որոնք վերաբերում էին կարճ ժամանակում ուսանողների փոխանակմանը: Ուսանողների բոլոր ծախսերը հոգալու է չինական կողմը:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ

Տարերքը Տավուշի մարզին պատճառել է 90 մլն դրամի վնաս

ԻՋԵՎԱՆ, 23 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Այս տարվա գարնանային հորդ անձրեւներից, հեղեղից, ինչպես նաեւ առանձին վայրերում տեղեցած կարկուտից զգալիորեն տուժել է Տավուշի մարզի գյուղատնտեսությունը: Տարերքը նյութական վնաս է պատճառել հատկապես Իջեւանի տարածաշրջանի Գետահովիտ, Խաչբաղակ, Լուսահովիտ, Նոյեմբերյանի տարածաշրջանի Բաղանիս գյուղերի ագրարային տնտեսություններին: Համայնքներում ստեղծված հանձնաժողովներն արդեն ամփոփել եւ ճշտել են վնասի չափը, որը դրամական արտահայտությամբ կազմում է 90 մլն դրամ: Տարերքից տուժած գյուղացիներին օգնելու նպատակով կատարված ուսումնասիրությունների արդյունքները շուտով կներկայացվեն ՀՀ կառավարություն:

Աղեսի գոտու ֆինանսավորումը կկրկնապատկվի

ՎԱՆԱՁՈՐ, 23 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամը աղեսի գոտու վերականգնման ծրագրի շրջանակներում Լոռու մարզպետարանի հետ 2 անգամ ավելի շատ ֆինանսական ներդրումներ կկատարի ընթացիկ տարում 2 անգամ ավելի շատ ֆինանսական ներդրումներ կկատարի, քան անցած տարի: Լոռու մարզպետարանի ճարտարապետության եւ քաղաքաշինության վարչությունում հայտնեցին, որ հիմնականում կֆինանսավորվի դպրոցաշինությունը, Վանաձորի բակերում խաղահրապարակների կառուցումը, ինչպես նաեւ խմելու ջրուղիների նորոգման կամ շինարարության տարբեր մասշտաբի աշխատանքները: Իսկ մոտ օրերս կհայտարարվի մրցույթ շինարարական կազմակերպությունների միջեւ՝ Վանաձորի ավելի քան 10 տարի տնակային պայմաններում գործող թիվ 22 միջնակարգ դպրոցի կառուցողին որոշելու նպատակով:

Եվրամիությունը. հունիսի 22-ը նվիրեց Կովկասին

Սկիզբը էջ 1

Հանդիպում է տեղի ունեցել նաեւ Եվրամիության հանձնաժողովի գործող նախագահ Ժան Սանտերի եւ Հայաստանի, Վրաստանի նախագահների ու Ադրբեջանի վարչապետի միջեւ: Պարոն Սանտերը նշել է, որ հունիսի 22-ը նվիրված է Կովկասին, եւ նախաձեռնությունը Գերմանիայինն է: ԵՄ-ն տարածաշրջանին արդեն շուրջ մեկ միլիարդ ԱՄՆ դոլարի օգնություն է ցույց տվել եւ հուսով է, որ տարածաշրջանում իրականացվող բազմակողմ նախաձեռնությունները կնպաստեն թշնամանքի ու հակամարտությունների վերացմանը, իսկ ԵՄ-ն պատրաստ է օժանդակել իր կարողությունների չափով: Ռոբերտ Քոչարյանը ուշադրություն է հրավիրել տարածաշրջանային զարգացումների մեջ Եվրամիության դերին եւ նշել է, որ մեր երկրների կողմից իրականացվող քաղաքականությունը հետզհետե համապատասխանեցվում է եվրոպական չափանիշներին: Նա ընդգծել է մի քանի եզրակացություն-դրույթներ, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել: Մասնավորապես, կայունությունը կարեւոր է ամբողջ տարածաշրջանում եւ ոչ միայն մեկ առանձին երկրում, կարեւոր է, որ իշխի տարածաշրջանային մտածելակերպը, համագործակցության հնարավոր ձեւերը սպառված չեն:

Աշխատանքային այցի շրջանակներում Ռոբերտ Քոչարյանը հունիսի 22-ի առավոտյան հանդիպում է ունեցել նաեւ Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության վարչապետ Ժան Կլոդ Յունկերի հետ: Զրույցի ընթացքում արծարծվել են կովկասյան տարածաշրջանին վերաբերող խնդիրներ, ինչպես նաեւ տնտեսության տարբեր ճյուղերում, ֆինանսաբանկային համակարգում համագործակցության հնարավորությունները:

Այնուհետեւ ՀՀ նախագահը հանդիպել է Լյուքսեմբուրգի մեծ դուքս Ժանի հետ: Քննարկվել են դարաբաղյան հակամարտությանը, Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակելու 1700-ամյակին եւ տարածաշրջանային համագործակցությանն առնչվող հարցեր: Մեծ դուքսը ցանկություն է հայտնել, որ կովկասյան երեք պետությունների միջեւ լինի այնպիսի համագործակցություն, ինչպիսին Բենիլյուքսի երկրների՝ Բելգիայի, Նիդեռլանդների եւ Լյուքսեմբուրգի միջեւ է: Երեկոյան տեղի է ունեցել նախագահ Ռոբերտ Քոչարյանի հանդիպումը Վրաստանի նախագահ Էդուարդ Շեւարդնաձեի հետ:

Ռոբերտ Քոչարյանը հունիսի 22-ի երեկոյան հանդիպում է ունեցել Եվրոպական հանձնաժողովի անդամ Հանս վան դեն Բրուկի հետ: Վերջինս դարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում ընդգծել է նախագահներ Ռոբերտ Քոչարյանի եւ Հեյդար Ալիեւի հանդիպումների ու ջանքերի կարեւորությունը:

Խոսվել է նաեւ տարածաշրջանում Եվրամիության կողմից իրականացվող ծրագրերի եւ որոշ ծրագրերին ԵՄ-ի հնարավոր օժանդակության մասին: Զրուցակիցները քննարկել են նաեւ Մեծամորի ատոմակայանին առնչվող հարցեր, անդրադարձել են Հայաստանում տնտեսական բարեփոխումներին, ուսանողական ճգնաժամի ազդեցությանը, ինչպես նաեւ Կոսովոյի խնդրին:

Ռոբերտ Քոչարյանը հունիսի 23-ի առավոտյան մեկնել է Բրյուսել: Նախագահը հանդիպել է Բելգիայի վարչապետ Ժան Լյուք Դեհանի հետ: Քննարկվել են երկկողմ հարաբերությունների ակտիվացմանը, անհրաժեշտ օրենսդրական դաշտի ձեւավորմանը, Եվրամիության շրջանակներում համագործակցությանը վերաբերող, ինչպես նաեւ տարածաշրջանային խնդիրներ:

Այնուհետեւ ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում Հայաստանի նախագահը հանդիպել է ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Խավիեր Սոլանայի հետ: Ռոբերտ Քոչարյանի խնդրանքով պրն Սոլանան ներկայացրել է Կոսովոյի իրավիճակը, ինչպես նաեւ այս տարածաշրջանում կազմակերպության հետագա ծրագրերը: Հայաստանի նախագահն իր հերթին ներկայացրել է դարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացի ներկա վիճակը:

Քննարկվել են նաեւ Հայաստան-ՆԱՏՕ փոխհարաբերությունները, «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում համագործակցությանն առնչվող հարցեր:

ՀՀ ԵՎՐՈԿՈՄԻ ՄՇՄԼՈ ԳՐԱՍԵՆՅԱԿ

digitised by A.R.A.R.@

ԼՂՀ. Վերաբնակեցման պատկերներ

Ադրբեջան-ԼՂՀ պատերազմում 1994 թ. մայիսին հաստատված հրադադարը նոպաստավոր պայմաններ ստեղծեց Արցախի ավերված տնտեսության վերականգնման, սոցիալական բազմաթիսի հարցերի լուծման համար: ԼՂՀ-ի ամենացավոտ հարցերից մեկը կապված է Ադրբեջանի կողմից 1992 թ. հունիսին զավթված Շահումյանի շրջանի հետ: Հազարավոր շահումյանցիներ այն ժամանակ ցրվեցին աշխարհով մեկ հազիվ փրկելով իրենց կյանքը, կորցնելով հայրենի հող, տարիների քրտինքով ստեղծված տունուտեղ: Հարյուրավոր զոհեր տվեց շրջանը, հարյուրավոր մարդիկ մնացին գյուղերում ու տեղահանության դաժան ճանապարհներին:

Հրադադարի հաստատումից հետո Շահումյանի շրջանի ազատագրման հարցը մտավ քաղաքական երկարատև գործընթացների մեջ, իսկ բռնի տեղահանված բնակչության զրկանքները, հոգսերն ու պահանջները սահման չունեին: Ստեղծված իրավիճակում իշխանություններն իրատես որոշում կայացրին: 1994 թ. ամռանը ժամանակավոր բնակության տեղ հատկացվեց Մարտակերտի շրջանի հյուսիսային մասում, եւ սկսվեց շահումյանցիների վերաբնակեցումը: Ի՞նչ տվեցին անցած հինգ տարիները: Նախ պետության սոցիալական բեռը նկատելիորեն թեթեւացավ, քանի որ օգնություն ստանալու փոխարեն վերաբնակն ինքը շոշափելի նյութական արժեքներ է ստեղծում, հատկապես մթերք: Եվ երկրորդ՝ ամայացած, իրենց էթնիկական կերպարանքը կորցրած երբեմնի ծաղկուն հայկական գյուղերը վերականգնվեցին: Ոչ պակաս կարեւոր է, որ վերաբնակներն ազատվել են անարդար կերպով իրենց կոչած «փախստական» անվանումից, տարբեր դռներ բախելու, խնդրելու, անվերջ օգնության սպասելու նվաստացնող վիճակից, վերականգնվել է մարդկային արժանապատվությունը:

Առաջին քայլերն արվեցին Ականաբերդում, որին հաջորդեցին Չարեքտարը, Դաղիվանքը, Տոնիբենը: Շահումյանի շրջանային վարչակազմի ղեկավար Ռոբերտ Այդինյանի հետ շրջում ենք Ականաբերդում եւ հիացմունքով նկատում, թե ինչպիսի հրաշք է կատարվել ավերակույտից մինչեւ բարեկարգ բնակավայր, թվառության դուռը հասցված «փախստականից» մինչեւ տնտեսություն ունեցող, ինքնավստահ հայ շինական: Պարզապես պատմական ձեռքբերում է, որ Շահումյանի շրջանից ոչ հեռու, միանման բնակլիմայական պայմաններում շահումյանցիներով բնակեցված չորս գյուղեր կան արդեն, որոնց շնորհիվ պահպանվում ու աճում է այդ հրաշալի գենոֆոնդը, պահպանվում են մեր գերյալ գյուղերի բարի ավանդույթները, համով-հոտով զուգները, սովորությունները, բարքաը եւ այլն: Այդ ամենը իրական հող են արցախյան գերյալ հողերի պահանջատիրության համար եւ երաշխիք՝ շահումյանցիների երազանքի իրականացման:

Մեր լուսանկարային փոքրիկ պատմությունները նոպատակ չունեն վերհանելու վերաբնակեցման բոլոր խնդիրներն ու հոգսերը, այլ միայն ցույց տալու ձեռք բերվածը:

Ականաբերդի նորընծա պատիկը

Արկադյա Գյուրջանին բաժին են հասել շահումյանցու ճակատագրի բոլոր դառնությունները: Ընտանիքով մասնակից է եղել ինքնապաշտպանությանը, անցել բռնի տեղահանության դժոխային ճանապարհով: Շրջանի անկումից հետո Ֆուրման որդին բողոքեց հանալսարանի ուսանողական նստարանն ու գնաց պարտիզանական ջոկաս, կյանքը նվիրաբերեց հայրենի հողի փրկությանը: Սակայն Արկադյային բաժին է հասել նաեւ շահումյանցու կամքի հզոր ուժն ու անկոտրում ոգին: Նա ինքն էլ՝ հենց սկզբից պարտիզանական ջոկաս: Հետո էլ մյուս որդին գնաց ջոկաս՝ իր մոտ: Հրադադարից հետո նա առաջիններից մեկը ընտանիքով հաստատվեց Ականաբերդում, հրաշքաշան աշխատանքով բարեկարգ տնտեսություն ստեղծեց, ամուսնացրեց որդուն, իսկ հիմա արդեն պապիկ է:

Պապիկի հզոր ծեռքերի մեջ խաղաղ ու երջանիկ է թոռնիկը: «Միայն ինձ մոտ է այսպես հանգիստ մնում, հոյարս ասում է պապիկը: Չեռքերիս մեջ էլ մնում է, հետո պատկերացնում եմ իր տեղում»: Գրկին սեղմելով այս փոքրիկ, աստվածային էակին, նա կարծես խեղդում է արտի ցավն ու հայրենիքի կարոտը եւ ուժ տանում ապրելու, ստեղծելու:

Ականաբերդը բազմազավակների գյուղ է

Գյուղում առաջին հերթին ուրախացնում են երեխաները: Վարչակազմի ղեկավար Ռոբերտ Այդինյանը պատմում է, որ շրջակայքում այդպիսի ուրիշ գյուղ չկա: Մեծ մասը երիտասարդ ընտանիքներ են ու բազմազավակ: Գյուլիստանցի Միհր Մնացականյանը տասը երեխա ունի: Երիցքի էլդար Դիվանյանի ընտանիքում վերջերս ծնվեց վեցերորդ տղան: Շատ-շատ են այդպիսի օրինակները, բոլորին չես թվարկի: Եվ դա իր հերթին վկայում է, որ վերաբնակներն իրենց վստահ են զգում արցախյան հողի վրա, նրանք լավատեսորեն են նայում վաղվա օրվան, գիտեն, որ իրենց քրտինքով կարող են բավարարել աճող ընտանիքի պահանջները:

ԼՂՀ իշխանություններն էլ են աջակցում բազմազավակ ընտանիքներին: Ընտանիքի չորրորդ երեխային (ու նրանից հետո յուրաքանչյուրին) պետությունը միանվագ 1000 ԱՄՆ դոլար է տալիս, որը երեխայի անունով դրվում է բանկում, մինչեւ նրա չափահաս դառնալը: Ծնողներն ամեն ամիս կարող են ստանալ այդ գումարի տոկոսները, որը զգալի հավելում է ընտանիքի բյուջեն:

«Հարսնացուն հյուսիսից»

Բռնի տեղահանված շահումյանցիների մեծ մասն աղաստան է գտել Ռուսաստանում: Նրանք ջանում են պահպանել կապերը միմյանց հետ, տղա ու աղջիկ ամուսնացնելու համար էլ հաճախ հայրենակիցներից են ընտրում: Սակայն Արմիկ Եսայանի կյանքն այլ կերպ դասավորվեց:

Ինքնապաշտպանության ծանր օրերին նա Ռուսաստանից հայրենիք վերադարձավ, մտավ պարտիզանական ջոկաս: Հրադադարի հաստատումից հետո կրկին մեկնեց Ռուսաստան, այնտեղ իր կյանքը կապեց կրասնոդարցի այս բարեսեռ աղջկա՝ Տանյայի հետ: Երբ սկսվեց շահումյանցիների վերաբնակեցումը, Արմիկի ծնողները՝ Ռազմիկ եւ Սոնյա Եսայաններն առաջինների թվում հաստատվեցին Ականաբերդում, կարճ ժամանակում տունուտեղ դրեցին, տնտեսություն ստեղծեցին եւ աղորում են աղահով: Եվ հիմա հարսը՝ Տանյան, իր փոքրիկ աղջնակի հետ Ռուսաստանից եկել է Ականաբերդ, շուտով կգա նաեւ Արմիկը, ու բոլորը կապրեն նույն հարկի տակ:

Ահա այսպես, կաթիլ առ կաթիլ տարբեր տեղերից գաղիս, համախմբվում են շահումյանցիները, շենացնում արցախյան հողն ու այդպես, կաթիլ առ կաթիլ, ավելի իրական է դառնում հարազատ շրջանի վերականգնման երազանքը:

Այստեղ հպարտությամբ են հյուր ընդունում

Ականաբերդում վերաբնակներ կան Շահումյանի բոլոր գյուղերից, որոնց հարազատներն ու ընկերները ցրված են տարբեր քաղաքներում ու շրջաններում, տարբեր երկրներում: Աղահով պայմանների ստեղծումը, հայրենի ավանդույթների վերականգնումը, հարազատ բարքերն ու բնությունը հեռուներից ծգում, բերում են հայրենակիցներին, որոնք այստեղ հայրենի հողի կարոտն են առնում, վերապրում անցյալ օրերի հաճույքը: Ականաբերդում էլ հաճույքով ու հպարտությամբ են ընդունում հյուրերին, որովհետեւ այստեղ ոչ ոք «փախստական» չէ, եւ նրանք առատորեն կարողանում են սեղանին դնել իրենց ստեղծածն ու աճեցրածը: Այս լուսանկարում վերինբենցի Սիլվա Ջլավյանն է (աջից երկրորդը), որը Սարատովի մարզից հյուր է եկել բարեկամներին:

Զրույցի ժամանակ Ռոբերտ Այդինյանը մի ուշագրավ փաստ բերեց: Միայն վերջին շաբաթվա ընթացքում գյուղի փոստը հեռախոսային շուրջ 80 պատվեր է կատարել մարդկանց կապելով հեռուներում գտնվող հարազատների հետ: Իսկ դա կյանքի բարելավման ցուցանիշ է ոչ թե սոսկ նյութական, այլեւ բարոյական առումով՝ երեկ այս նույն մարդիկ ոչ զանգելու միջոց ունեին, ոչ էլ տրամադրություն...

«Նահատակ» ուխտավայրը

Շահումյանի շրջանի թերեւս բոլոր գյուղերում «Նահատակ» անունով սրբավայր-ուխտատեղիներ կային որոնց փառավոր անցյալի, նախնյաց հաջագործությունների վկայություններ: Որոնց կանոն, դրանք պարզ խաչքարեր էին եւ գտնվում էին տվյալ գյուղի պատմության ամենակարեւոր տեղերում: Ավաղ, հետո էլ շրջանն ինքը նահատակ դարձավ: Վերաբնակները անթիվ ու բազմաստեսակ կորուստներ ապրած մարդիկ, մի տեղ չունեին գոնե արժանի ծեւով մոմ վառելու, իրենց հոգին թեթեւացնելու համար: Շրջանային «Մոավի դողանջներ» թերթի ջանքերով, անվճար կերպով բազմաթիվ բարեգործների աջակցությամբ ստեղծվեց «Նահատակ» անունով խաչքար-հուշարձան նվիրված «Շահումյանում եւ հանուն Շահումյանի զոհվածներին, անշիրիմ մնացածներին, գերյալ եւ տարագիր շիրիմներին»: Երեւանի գեղարվեստի ինստիտուտի ֆանդակի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Գեղիկ Բաղդասարյանի գլխավորությամբ մի խումբ երիտասարդ նվիրյալներ հուշարձանը կերտեցին մի վիթխարի ժայռաբեկորից:

Լուսանկարում (ձախից աջ) շրջանային վարչակազմի ղեկավար Ռոբերտ Այդինյանը, «Մոավի դողանջներ» թերթի խմբագիր Կիմ Դանիելյանը, «Շահումյան-Գեղարքունիք» բարեգործական-հայրենակցական միության նախագահ Էդիկ Բալայանը, գյուղի կոլեկտիվ տնտեսության նախագահ Կամո Եսայանը

Այսօր Ականաբերդում գեղեցիկ պուրակ կա, որտեղ վեր է խոնում «Նահատակ» խաչքարը: Այստեղ են անցկացվում հանդիսավոր արարողությունները: Այստեղ են անցկացվում պատշաճական եւ ընկերական հանդիպումներ, այստեղ են սկիզբ առնում հիշատակի ու բարի գործերը: Սա մի յուրատեսակ ուխտատեղի է նորապսակների եւ դպրոցի շրջանավարտների համար, լուռ հաշվետվության վայր է անմոռաց անունների հետ կապված, նրանց հիշատակի ուխտավայրն է:

ԿԻՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ.
Ականաբերդ-Երեւան

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

Ռուսաստանը փրկո՞ւմ է դեմքը

Վաղը, հունիսի 25-ին, Ռուսաստանի խորհրդարանի վերին palատը Դաշնության խորհուրդը, արտահերթ նիստում որեմ է ընդունի Կոսովո ռուսական խաղաղարարների զորախումբ ուղարկելու մասին նախագահ Ելցինի միջնորդությունը: Համաձայն երկրի սահմանադրության, զորքերն այդպիսի առաքելություն կարող են ստանձնել միայն սենատորների թույլտվությամբ: Բացի այդ, Կոսովո զորախումբ տեղափոխող ռուսական ինքնաթիռներին օդային միջանցքներ տրամադրելու համար խորհրդարանի համաձայնությունը որոշում ներկայացնելու պահանջ է դրել վերջերս ՆԱՏՕ-ին անդամագրված Հունգարիան: Որեւէ կասկած լինել չի կարող, որ ՌԴ խորհրդարանի վերին palատն իր խաղաղարար զորախումբը Կոսովո ուղարկելու համաձայնություն կտա: Սակայն չի կարելի չնկատել, որ պաշտոնական Բուդապեշտը «պոչ է խաղացնում». ռուսներից այդպիսի որոշում պահանջելը նրա խնդիրը չէ, քանի որ կա ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թույլտվությունը: Սակայն արդեն այդ թույլտվությունից եւ Հարավսլավիայի ՆԱՏՕ-ական ռմբակոծություններից դադարեցնելուց հետո Արեւմուտքն ակնհայտորեն ձգտում էր զրոյի հավասարեցնել պատերազմի դադարեցման գործում Ռուսաստանի ներդրած ավանդը: Առաջադրյալը Կոսովոն ՆԱՏՕ-ի 5 երկրների՝ ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի եւ Իտալիայի միջեւ հատվածների բաժանելու որոշումն էր, որտեղ ռուսներին որեւէ դեր վերապահված չէր: Մոսկվան տհաճ անակնկալ մատուցեց անգլիական զորքերի Կոսովո մտնելուց մեկ օր առաջ մոտոհետեւակի դեսանտային մի գումարակով տրընթաց առաջանալով Բոսնիայից Պրիշտինա, ինչի շնորհիվ հսկողություն սահմանվեց Կոսովոյի մայրաքաղաքի անվնաս մնացած միակ օդանավակայանի միակ սարքին թռիչքուղու վրա: Բառի ուղղակի իմաստով մահաբերների այդ գումարակը փրկեց Ռուսաստանի դեմքը Արեւմուտքը կանգնեց կամ նրանց ալբանացիների ծեռքով ոչնչացնելու կամ Կոսովոյում ռուսների ներկայությունը հանդուրժելու երկընտրանքի առաջ: ԱՄՆ-ի պետքարտուղարի տեղակալ Սթրոբ Թալբոթը, որ ռուսական գումարակի «կոսովյան ճեղքման» օրը Մոսկվայում էր, լրագրողներին հայտարարեց, թե ինքը կտրականապես մերժել է Կոսովոյում ռուսական «որեւէ ներկայություն», սեղմված էր մեկնումից ժամուկես անց շրջել իր ինքնաթիռը եւ վերադառնալ Մոսկվա բացատրություններ: Այդպիսի չեղան: Մոսկվան հասկացրեց, որ Եվրոպայի «դռնից» իրեն անբռնազբոս դուրս վռնդելու դեպքում պատասխան է ներս խցկվել «պատուհանից»: Ուզում եմ, թե ոչ՝ մենք արդեն Պրիշտինայում ենք, փորձեք կրկին «վռնդել», կարծես թե այս էր ռուսների միակ «փաստարկը»: Բացատրություններ եւ ներողություններ լսելու փոխարեն Արեւմուտքը դեմ առավ ռուսների հասակողությանը մեզ պետք է դիտեմ որպես հավասարարժեք գործընկերոջ, հաստատեմ ինքնուրույն հատված, թույլատրեմ 10 հազարանոց զորախմբի մուտքը, մենք չենք ենթարկվելու ՆԱՏՕ-ական հրամանատարությանը եւ այլն: Հինգ օր աշխարհը սպասում էր Մոսկվայի, արդա եւ հելսինկյան բանակցությունների ավարտին: Քանի դեռ դրանք ընթանում էին, նախապատրաստվում էր «Մեծ յոթնյակի» ղեկավարների Քյոլնի հանդիպումը, որին հրավիրված էր նաեւ Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինը: Արեւմուտքը սկզբում փորձեց ահաբեկել ռուսներին. անգլիական պատշտոնատարների շուրթերով սպառնալով, թե իրենց «համեստ» յոթահելու դեպքում միջազգային ֆինանսական կազմակերպություններից որեւէ օգնության հույս չպետք է փայփայել: Հունգարիան, այլը Վաշինգտոնի հրահանգին, շարունակում էր փակ պահել իր օդային տարածքը: Մի պահ նույնիսկ թվաց, թե Պրիշտինայի օդանավակայանի շրջանում շրջանաձեւ պատերազմություն բռնած ռուս դեսանտային գումարակի վիճակն օրհասական է սպառվել եւ ուտելիքը եւ, ամենակարեւորը, խմելու ջուրը: Մոսկվայում լրջորեն քննարկում էին ծովով այդ գումարակին օգնություն առաքելու հարցը: Սակայն հաջողվեց միջադեպը հարթել: Արեւմուտքը հասկացավ, որ Ռուսաստանը ոչ մի դեպքում նոր նվաստացման չի գնա (եղածը լիուլի բավական էր): Արեւմուտքը հասկացավ նաեւ, որ ռուսները, ավաղ, բշնամի, միջինը չկա: Եվ որոշեց գիջել ավելի լավ է հեռու լինել գլխացավանքից եւ բշնամանքի չգնալ: Այսպես ծնվեցին հելսինկյան համաձայնությունները: Մոսկվան, իհարկե, չհասավ իր պահանջների լրիվ բավարարմանը: Նրան ինքնուրույն հատված չհատկացվեց, վերապահվեցին գոտիներ ամերիկյան, անգլիական եւ ֆրանսիական հատվածներում: Ռուս խաղաղարարների թիվը Մոսկվայի պահանջած 10-ից իջեցվեց 3,6 հազարի, լողված մնաց ՆԱՏՕ-ի ընդհանուր հրամանատարությանը ռուսների ենթակայության հարցը: Սա, իհարկե, շատ քիչ է Կոսովոյում որեւէ ինքնուրույն դերակատարություն իրականացնելու համար: Սակայն, անշուշտ, շատ ու շատ է նախապես ՆԱՏՕ-ի ծրագրավորած «ոչնչի» փոխարեն: Սիա ինչու վարչապետ Ստեպաշինից մեկ օր հետո, հունիսի 20-ին, այն էլ ընդամենը 5 ժամով Քյոլնում հայտնված Բորիս Ելցինի տրամադրությունը շատ բարձր էր: «Մեծ յոթնյակի» նիստը նա համառորեն շարունակում էր անվանել «Մեծ ութնյակի» նիստ, շատ ջերմ էր ԱՄՆ-ի նախագահ Բիլ Քլինթոնի նկատմամբ, որին դրանից մի քանի օր առաջ ուղղակի ծաղրում էր իր երկրի հեռուստաթերից, եւ անգամ ցուցաբերեց գոնե իր համար աներեւակայելի «ջենթլմենություն» համբուրեց ԱՄՆ-ի պետքարտուղար Մադլեն Օլբրայթի ձեռքը: Միջազգային որակիչներում այս կարգի «արտաքեղումներ», այն էլ նախագահների կողմից նախարարուհիների հանդեպ, ընդունված չեն: Բայց Ելցինը շատ էր ցանկանում ընդգծել, թե ռուսները կարող են նաեւ խիստ բարեկիրթ լինել, եթե նրանց «կոշտուկը» անչափ ցավագնորեն չեն տրորում: Քյոլնում հունիսի 20-ին ստորագրված բոլոր հարցերը, այդ թվում նույնիսկ Ռուսաստանին անցած խորհրդային Միության 100 միլիարդ դոլարի հասնող պարտքերը մասնակիորեն գիջելը կամ 20 տարով հետաձգելը, Վաշինգտոնի եւ ԱՄՆ-ի միջեւ ստրատեգիական սպառազինությունների սահմանափակման 2-րդ եւ 3-րդ պայմանագրերին կրկին անդրադառնալու պայմանավորվածությունը, վարչապետ Ստեպաշինի եւ փոխնախագահ Գորի պաշտոնական հանդիպումներն արդեն օգոստոսին վերսկսելը եւ այլն, երկրորդական էին: Ելցինին հետաքրքրում էր առաջին հերթին նախորդ օրը Կոսովոյի վերաբերյալ Հելսինկիում արտգործնախարարների մակարդակով ծեռք բերված պայմանավորվածությունների հաստատումը «Մեծ յոթնյակի» ղեկավարների կողմից, որը եւ տեղի ունեցավ:

Ռուսաստանն, այսպիսով, խաղեց պրիշտինյան օդանավակայանի թռիչքուղին գրաված իր գումարակի սխրանքի պտուղները՝ օրինականացրեց իր ռազմական ներկայությունը Եվրոպայի կենտրոնում: Մոսկվան ապացուցեց նաեւ, որ «իր մահվան մասին լուրերը խիստ չափազանցված են»: Իսկ ավելի լուրջ՝ Ռուսաստանը փրկեց իր դեմքը, խույս տվեց համաշխարհային հանրության աչքում վերջնականապես ու անդառնալիորեն վարկաբեկվելուց: Ստեղծված իրավիճակում դա առավելագույնն էր: Ինչպես դիպուկ նկատեց ՕՊՏ-ի մեկնաբան Լեոնտեւը, ռուսներն ապացուցեցին, որ դեռ ի վիճակի են «Բրուսիլովյան ճեղքումների» (1916 թ. ռուսական գեներալ Բրուսիլովի՝ ռազմական արվեստի բոլոր դասագրքերը մտած փայլուն բանակային գործողության անվանումը), սակայն առաջվա պես ուժեր չունեն հաջողությունը զարգացնելու եւ ճեղքումը խորացնելու:

Ամփոփելով, կարող ենք ասել գերտերությունները, եւ առաջին հերթին ԱՄՆ-ը, իրենց ուզածին հասան. Եվրոպայից «դոլարի դուրսմղման» գործընթացն առնվազն դանդաղեց (դոլարի կուրսը, որ Եվրոպի ներդրման պահին ցածր էր Եվրոպական միասնական տարադրամից, այժմ զգալիորեն բարձր է): Իսկ դա նշանակում է, որ այս պատերազմից ստեսպես ամենաշատ շահողն ԱՄՆ-ը եղավ: Անգլիան, Գերմանիան, Ֆրանսիան, մյուսները կրկին հավաստեցին իրենց հավատարմությունը Ռեյի Սամին: Ռուսաստանը վերջին պահին հասավ Եվրոպայից իրեն «դուրս մղելու» անպատակահարմարության ընդունմանը: Միակ տուժողն ալբանացիներն ու սերբերն էին, որոնց այդուն առատորեն հեղվեց ու դեռ շատ է հեղվելու հանուն այլոց աշխարհաքաղաքական, մեծապետական նկրտումների: Չուտ չէր ռուսական հեռուստամեկնաբաններից մեկը դառնությամբ նկատում, թե «Կոսովոյում պատերազմ չլինելու դեպքում ԱՄՆ-ն այն կհորիներ»: Անկասկած: Սակայն ցիշտ է նաեւ, որ ԱՄՆ-ը որքան էլ ուզենար չէր կարողանա կազմակերպել «հարավսլավական գլադիատորական խաղերը», եթե այնտեղ արդեն իսկ պատրաստի «գլադիատորներ» չլինեին: Իսկ սա արդեն աշխարհի այլ տարածաշրջանների, այդ թվում Անդրկովկասի «գլադիատորներին» ի գիտություն...

ՌԱՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՌՃԱԿԱՏՈՒՄ

Հնդկա-պակիստանյան սահմանում բախումները սաստկանում են

ԴԵԼԻ, 23 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հնդկաստանն այսօր Պակիստանին կոչ է արել իրադրեւ «երաշխավորել» Քաշմիրում փաստական վերահսկման գծի (սահմանի) «անձեռնմխելիությունը», ինչը կարող է առիթ ծառայել այս տարածաշրջանում գինված հակամարտության դադարեցման շուրջ երկկողմ կոնսուլտացիաներ սկսելու համար:

Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման, նման նախաձեռնությամբ հանդես եկած Հնդկաստանի առաջին փոխարտգործնախարար Ռագհունաթիը Դելիում հայտարարել է, որ «մինչեւ երկխոսություն սկսելը Պակիստանը պետք է վերացնի Հնդկաստան ներխուժման հետեւանքները եւ նրա տարածքից դուրս բերի իր զինծառայողներին»:

Ըստ հնդկական հրամանատարության հաղորդումների, վերջին մի քանի օրվա ընթացքում Քարգիլի մարտերում ոչնչացվել է մինչեւ 50 պակիստանցի զինվոր:

Պակիստանի բանակը պատասխանում է Հնդկաստանի սահմանամերձ շրջանների ուժեղացված հրետակոծումներով: Ըստ մամուլի հրապարակած ոչ պաշտոնական տեղեկությունների, մարտերի ընթացքում հնդկական կողմի կորուստները կազմել են առնվազն 500 մարդ: Մարտական գործողությունների շրջաններից գաղթականների թիվը հասել է մինչեւ 200 հազարի:

Սիրիայում շարունակվում է պայքարը աղօրինությունների դեմ

Սիրիայի ֆինանսների նախարար Ս. Խ. Մահայնին հավաստիացրել է, որ 1998 թ. ընթացքում ֆինանսական ընդհանուր յուրացումներից վերադարձվել է 114 միլիոն լիրա (շուրջ 2,5 մլն դոլար): Հունիսի 21-ին, ֆինանսների վերահսկման կենտրոնական մարմնի տնօրենների համաժողովը բացելու ժամանակ, նախարարը պարզաբանել է, որ այդ գումարը վերադարձվել է 153 գործերից, որոնց մի մասը հանձնվել է համապատասխան դատարաններին, մինչդեռ հանցագործների եւ նրանց կանանց գումարները նախնական կալանքի տակ են դրվել: Իսկ հունիսի 22-ին «Բաաս» թերթը հայտնել է, որ 36 հոգի՝ Դամասկոսի հեռախոսակայանից, աճուրդների հանձնախմբից եւ մի շարք կառավարություններ, ուղարկվել են տնտեսական անվտանգության դատարաններ, պահանջելով նախնական կալանքի ենթարկել նրանց եւ նրանց կանանց շարժական եւ անշարժ ունեցվածքը՝ իբրեւ երաշխիք պահանջվող գումարները ետ վերցնելու համար: Իր հերթին, վերոնշյալ տնօրենների հետ հանդիպելիս, Սիրիայի վարչապետ Մահմուդ Զուբին ընդգծել է, թե ոչ ոք օրենքից վեր չէ, եւ ոչ մի չարագործ անձեռնմխելի չէ:

Հայտնի է, որ նախագահ Հաֆեզ Ասադի որդին՝ դոկտ. Բաշար Ասադը, 2 տարուց ի վեր չարաշահումների դեմ պայքարելու մեծ արավ է ղեկավարում, որը վերջին 6 ամիսներին հասել է լուրջ փուլի. ծերբակալվել են ճանաչված անձնավորություններ, այդ թվում բարձրաստիճան սպաներ եւ ընդհանուր տնօրեններ, եւ ում մեղսակցությունը առաջադրվել է բաշտել:

Ա. Ա.

«Կոկա-կոլա». ֆրանսիացիների «գերզգուշավորությունը»

Նույնիսկ Ֆրանսիայի առողջապահության պետքարտուղարությունը «գերզգուշավորություն» բառն է օգտագործում հունիսի 15-ին երկրում ընդունված որոշումը բնութագրելիս, որի նպատակն է ժամանակավորապես դադարեցնել «Կոկա-կոլայի», «Կոկա-կոլա լայթի», «Սփրայթի» եւ «Ֆանտայի» վաճառքը: Ճգնաժամն սկսվեց հունիսի 10-ին Բելգիայում: Այնտեղ «Կոկա-կոլա» խմած բազմաթիվ անձինք իրենց վատ զգացին, որանց տարան հիվանդանոց: Հաջորդ օրը Բելգիայի առողջապահության նախարարությունը Ֆրանսիայի մրցակցության, սպառման եւ կեղծումների կանխման գլխավոր վարչությանը տեղեկացրեց, որ բունավորումների ենթադրյալ պատճառը ամերիկյան «Կոկա-կոլա» ընկերության ֆրանսիական Դյունկերկ քաղաքում գտնվող գործարանի մեսաղյա ամաններն են: Գործարանը տարաներ է թողարկում նաեւ «Կոկա-կոլա լայթի», «Սփրայթի» եւ «Ֆանտայի» համար: Հունիսի 15-ին Ֆրանսիայում եւս բունավորման դեպքեր արձանագրվեցին. «Կոկա-կոլա» խմելուց կես ժամ անց 38 եւ 60 տարեկան երկու անձինք իրենց շատ վատ զգացին: Ֆրանսիայի իշխանությունները «Կոկա-կոլա» ֆիրմայի ղեկավարությունից պահանջեցին ամենայն մանրամասնությամբ ներկայացնել սեփական արտադրանքի «երբուլիները», մասնավորապես Դյունկերկի գործարանում արտադրված տարաների առաքման հասցեները: Նույն օրը ամերիկյան ծեռնարկությունը ներկայացրեց հետեւյալ բացատրությունը. «Բելգիա առաքվող մեսաղյա ամանների կրկնաստակերը մշակվել են սենկասում բունաբերությունով, քանի որ ֆենոլ են պարունակել»: Ֆիրմայի ղեկավարների ոգեղմամբ, նման բերություն ունեցել են միայն Բելգիա արտաքսված ամանները:

Չնայած այս բացատրություններին, Ֆրանսիայի առողջապահության պետքարտուղար Մարիլիզ Լեբրանչյան եւ առողջապահության պետքարտուղար Բեռնար Կուշները բելգիացիներից, լյուքսեմբուրգցիներից եւ հոլանդացիներից հետո իրենց հերթին համապատասխան միջոցներ ծեռնարկեցին վերոհիշյալ չորս ըմպելիների վաճառքը Ֆրանսիայում ընդհատելու նպատակով: Ամերիկյան ֆիրմայի ղեկավարության պարզաբանումները Ֆրանսիացիներին անբավարար են թվում երկու պատճառով: Նախ, անհնար է վստահաբար ասել, թե բունանյութերով մշակված նույն մեսաղյա ամանները վաճառքի չեն հանվել նաեւ Ֆրանսիայում: Առա, ֆրանսիական հիշյալ երկու նախարարությունները երկյուղ ունեն, որ հարեւան երկրներ առաքված «Կոկա-կոլան» եւ մյուս ըմպելիները կարող են կրկին ներմուծվելով բարեանցել Ֆրանսիա: Ինչպես նշում է «Պուեն» հանդեսը, «Կոկա-կոլայի» ղեկավարների տված բացատրությունները բազմաթիվ մութ էջեր են բողնում: Ֆիրմայի վնասների ծավալը սահմանափակելու նպատակով ամերիկացիներն իրենց հասցեագրված դիմումից միայն չորս օր անց բարեհաճեցին խոստովանել, որ վտանգավոր որոշ նյութեր թերեւս կարող են բացահայտվել նաեւ Ֆրանսիայում վաճառվող արտադրանքի մեջ:

«Կոկա-կոլայի» արտադրանքի հետ կապված այս աղմուկը բելգիական հավերի մսի մեջ հայտնաբերված դիօքսինի անուղղակի հետեւանքներից մեկն է, որը նույնպես զգոնության պակասի հետեւանք է: Դիօքսինի հետ կապված գործի առնչությամբ Ֆրանսիայի մրցակցության, սպառման եւ կեղծումների կանխման գլխավոր վարչությունը ինքնաբերության ենթարկվեց մասնավորապես առողջապահության նախարարության կողմից, քանի որ անուղղորդության էր մատնել մայիսի 3-ին Բելգիայից ստացված ֆաքսը, որտեղ խոսվում էր Ֆրանսիական ընկերություններից մեկի ներմուծած բելգիական մթերքներում հնարավոր վտանգի մասին: Այս անգամ սպառման եւ առողջապահության պետքարտուղարները ջանացին իրոք զերզգուշավոր լինել:

Պ. Ա.

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Մեր կողքին... լեգենդ է ապրում

Ակզբում Էլմիրա Աբրահամյան, առա՛ Հեքեքյան, այս ազգանունն արդեն 40 տարուց ավելի լսվում է հեռուստատեսային էկրանից՝ ամենատարբեր հաղորդումներից հետո եւ դժվար է կանոնակարգել դրանք, գրական-գեղարվեստական, հասարակական-քաղաքական հաղորդումներ, տիկնիկային ներկայացումներ, մանկապատանեկան շոու, շերքներ Հանրապետության հրապարակից, տարեմուտի հանդեսներ, դրամատիկական բեմադրություններ...

Մեր հանրագիտարանում նրա անվանը հետեւում է. «Հայ ռեժիսոր եւ սցենարիստ, արվեստի վաստակավոր գործիչ, միջազգային մրցույթի դափնեկիր: 1946-57 թթ. աշխատել է Բաքվի Երեմյանի անվ. հայկական եւ Երեւանի Ստանիսլավսկու անվան ռուսական թատրոններում, 1958-ից՝ հայկական հեռուստատեսության ռեժիսոր է: 1946-ից զբաղվում է մանկավարժությամբ, 1992-ից «Հայ փոքրիկ երգիչներ» միջազգային ասոցիացիայի փոխնախագահն» է:

Ինչքան քիչ է ասված, համարյա ոչինչ, եւ այդ «ոչինչն» եմ ուզում բացահայտել:

1948-ին թատերական ինստիտուտ եկավ շուշանի պես ծերմակ, քիչ թմբլիկ մի աղջիկ: Նրա մորաքրոջ որդին Ավիկ Թորոսյանը, ռեժիսորականի 4-րդ կուրսում էր ու հանրակացարանում էր ապրում: Այդ սենյակում ապրում էին եւս վեց տղաներ (հետագայում նշանավոր էդգար Էլբակյան, Զարեհ Տեր-Կարապետյան, Գրիգոր Մկրտչյան, Սամիկոն Մանուկյան, Ալբերտ Անտոնյան): Կից աղջիկների սենյակում բնակվեց Էլմիրան, սկսեց հոգալ եւ եղբոր սնունդը եւ ակամա սկսեց ճաշ եփել բոլոր տղաների համար: Կատակով նրան կոչում էին «յոթ եղբոր միակ քույրը»: Սենյակ էր մտնում, երբ բոլորս ննջած էինք, իսկ ժամը 6-ին արդեն ջրի վրա էր: Առավոտյան դասեր, երեկոյան փորձեր, կոնսպեկտներ, պարապմունք գրականության ընթերցում, շուկա, խոհանոց եւ էլի շատ բան, ինչպես էր հասցնում՝ չէինք հասկանում:

Նրան իսկույն ընդգրկեցին հասարակական ու գեղարվեստական բոլոր միջոցառումներում՝ տարբեր ինստիտուտների հետ հանդիպումներ էր կազմակերպում՝ երեկույթներ... Շարունակ ակորդեոնը քարշ էր տալիս իր հետ, եթե դաշնամուր չկար՝ ակորդեոն էր նվագում, պարում էր ու երգում տարբեր լեզուներով... Իսկ երբ կուրսային բեմադրություններում խաղում էր, պարզվում էր, որ ծեւավորված դերասանուհի է, թատրոնում Վահրամ Փափազյանի, Ժասմենի, Աստղիկ Ազնավուրյանի, Արզո Արզումանյանի խաղընկերն էր: Եվս մի տարի եւ ուսումնական բեմադրություններով դրսեւորեց եւ իր ռեժիսորական օժտվածությունը: Դարձավ միակ անվանական թոքակառուն:

Շատերի նախանձը շարժեց... Եղավ այնպես, որ ամբողջ ինստիտուտի «աչքը» դարձած Էլմիրայի հեղինակությունը սկսեց դուր չգալ կուսղեկավարությանը: Եվ աղջկան մեղադրեցին... կոմսոմոլի քարտուղարի պաշտոնը «չարաշահելու» մեջ. «Մայիսի մեկին ինստիտուտի դռանը ակորդեոն է նվագում ու ողջ ուսանողությանը պարեցնում», դրան գումարվեց ճակատագրական ահավոր դիպվածը՝ Էլմիրայի կոմերիտական տոմսը գողացան... հարցը ննջեցին անգամ շրջկոմում... «Ի՞նչ կոմերիտական է», ասացին՝ ու ոնց ջարդուփշուր արին՝... Դրանից հիշանց, երբ մեր պատկերասրահում տեսա Ե. Թադեւոսյանի «Հանճարն ու ամբոխը» կտավը, ուր կինը հալածվում է մարդուկներից ու կարծես հիշատակ ու ատամների ժնգժնգոց ես լսում... Ինձ թվաց, թե նման բան էլ մենք արինք ու եթե այս նյութը գրել ցանկացա՝ ապա նաեւ իմ ու յուրայիններիս մեղքը քավելու...

Հետո մենք միասեղ քայլելու էինք եւ թատերական կյանքում, եւ հեռուստատեսությունում, սակայն այդպես էլ նա մեզ անճանաչ մնաց: Շատ տարիներ հետո պիտի իմանայինք, թե ով է մեր աշխատանքային ընկերուհին եւ ինչ ընտանիքից է սերում. Գանձակում Էլմիրայի պապը՝ ուսուցիչ Սուղդուսի Աբրահամը, իր իմաստնությամբ ու բարությամբ այնքան բացառիկ է եղել, որ երբ հայ-թուրքական խժդժություններ են սկսվել, թուրքերը յուրայիններին զգուշացրել են. «Այդ տանը չմոտենալ, սուրբ է ապրում»: Ինչքա՞ն հայ է թաքնվել իր տանն ու փրկվել...

Նախնիների մեջ շատ նշանավոր մասնագետներ եւ արվեստագետներ են եղել: Հիշատակության արժանի են Աստրախանի հայկական թատրոնի անտրեպրենյոր եւ բեմադրիչ Հալաբյանը, ռուս գրականության ռեֆորմատոր Վելիմիր Խլեբնիկով-Հալաբյանը, մեր թատրոնի ամենացնցող ու արտառոց երեւույթը՝ դերասանուհի Գայանեն, նույն ինքը տաղանդաշատ Սարգիս Մեհրաբյանը... Գործին առնչվող մարդիկ գիտեն, թե վերջին տարում ինչքան ջանք թափեց Էլմիրան (եւ շարունակում է ջանալ) իր պապի՝ ականավոր ճարտարապետ Կարո Հալաբյանի 100-ամյակն ու հիշատակը հավերժացնելու համար...

Հավանաբար նախնիների գեները է ժառանգել Էլմիրան...

1953-ին Գորկիի թատրոնում Յա. Գալանի «Սերը լուսաբացին» պիեսի բեմադրությամբ փայլուն ավարտելով ինստիտուտը, Էլմիրան աշխատանքի անցավ Երեւանի ռուսական թատրոնում, ուր Բ. Ֆիլիպովի հետ աշխատեց Դոստոեւսկու «Սատրապները եւ անարգվածները» բեմադրության վրա:

Այստեղից էլ հայկական հեռուստատեսության առաջին տնօրեն Ներսես Կագրամանովը նրան հրավիրեց նորաստեղծ բնագավառում աշխատելու: Միանգամից մխրճվելով որոնումի հորձանուտը, նա ինքը հայտնագործելու էր նախադեպը չունեցող հաղորդաշարեր ու մատուցման գեղարվեստատեխնիկական հնարներ, որոնք ժառանգելու եւ զարգացնելու էին հետո եկողները: Անակնկալներով լի եւ մատուցման նորովի եղանակով ստեղծված վավերագրական բազում կինոնկարների հեղինակ է Էլմիրա Հեքեքյանը, այդ թվում մեզանում՝ ստեղծված առաջին մյուզիքլի «Մինչեւ տասնվեց տարեկաններին... թույլատրվում է», որով մասնակցելով Չեխոսլովակիայում անցկացվող միջազգային փառատոնին առաջին դափնին բերեց նորաստեղծ հայկական հեռուստատեսությանը:

Դրամատիկ ռեժիսորի հոգեբանական զննումը, գեղագիտական ճաշակը կարելի էր տեսնել «Մոսկովյան արձակուրդներ» պիեսի էկրանավորման մեջ: Մի ամբողջ սերունդ դաստիարակվեց է. Հեքեքյանի եւ գեղագետ Վազգեն Օսիպյանի ստեղծած «Զրույցներ գեղագիտության մասին» հաղորդաշարով: Իսկ հաղորդումները, որոնք նա ստեղծեց անվանի թատերագետ Լուիզա Սամվելյանի հետ դարձան ոչ միայն հայկական հեռուստատեսության, այլեւ մեր մշակույթի մնայուն էջերը: Առաջին անգամ հնչեցին երկեր, որոնք անհայտ էին եւ հայ, եւ նախկին Միության ունկնդրին: Օրինակ, շատերը գիտեն խարույկի վրա այրված Ջորդանո Բրունոյին, սակայն ո՞վ գիտեր, որ նա թատերգակ է: Նրա «Սոմակալը» սրամիտ ու խելացի կատակերգությունը բեմադրվեց նոր աշխարհի հայտնագործման իրողություն դառնալով: Այդ նույն կերպ ճանաչեցինք Մաքիավելիի «Մանդրագորա»-ն: Առաջին անգամ հայերեն ծանոթացանք անտիկ աշխարհի ողբերգությանը (Եվրիպիդեսի «Իֆիգենիան Ավլիսում») եւ կատակերգությանը (Արիստոֆանի «Սամեր»), միջնադարյան միրակլներ («Փաստաբան Պատլեն», Թեոֆիլի մասին) եւ այլն: Եթե ավելացնենք, որ այդ ամենը «կենդանի խաղով» էր եթեր գնում եւ կառույցի մեջ բովանդակում էր ոչ միայն տեսական խոսք, այլեւ դարաշրջանի կերպարվեստի ու երաժշտության գլուխգործոցներ, ապա պարզ կդառնա, թե որքիսի բարդություն ունեին դրանք եւ որքիսի՞ վարպետություն էր պահանջում եթերային անվթար հաղորդումը:

Շատերի թվում եւ ես առաջին անգամ եթեր եմ դուրս եկել Էլմիրայի շնորհիվ, ժամանակի ամենաուշագրավ դերասանուհու՝ Մարուսիկ Թամրազյանի մասին հաղորդման առիթով: Եվս հիշարժան աշխատանք էր...

Ընդհանրապես Էլմիրայի սցենարներն աչքի են ընկնում իրենց դրամատուրգիական կուռ կառուցվածքով («Գեղեցիկի աշխարհում», «Խոտի բույրը», «Հասմիկ» հանդեսը), մի ակնառու ծեռքբերում, որ, ավաղ, այսօր իսպառ մոռացության է տվել էկրանի նորագույն սերունդը:

Մենք գիտենք մեր անհանգիստ, որոնող գործընկերոջը եւ միայն այդքանը...

1995 թ. մայիսի 9-ին Մոսկվայի հեռուստատեսային հաղորդումից իմացանք, որ մեր աշխատանքային ընկերուհին պարգեւատրվել է Հաղթանակի 50-ամյակի շքանշանով, եւ այդքան սովորական մարդն այնքան էլ սովորական չէ...

Երբ երաժշտական դպրոցն ավարտեց, սկսվեց պատերազմը, եւ 14 տարեկանը չբոլորած աղջիկը կամավոր գինվորագրվեց ռազմաճակատ: Մայրը ուսուցչուհի Ռոզալյա Աբրահամյանը, ակամա «կամավոր» դարձավ եւ դստեր հետ ծառայության անցավ պատշգամբական հատուկ նշանակություն ունեցող գինվորական օբյեկտում «երկրորդ կյանք» տալով հրետանային արկերին:

Տուն վերադարձավ ծեռքից վիրավորվելու պատճառով, ընդունվեց բժշկական ուսումնարան: Համատեղելու էր ուսումն ու աշխատանքը հոսպիտալում, այստեղ էլ ցանկալի, անսովոր բուժակ էր:

Ուսումնարանն ավարտելուց հետո Էլմիրան նշանակվեց գյուղի բուժկետի վարիչ: Եվ դարձյալ մայրը ստիպված եղավ ընկերանալ անչափահաս դստեր: 17 տարեկան էր, ռուսաց լեզու եւ գրականություն էր դասավանդում: Իրենից ընդամենը հինգ տարով փոքր աշակերտները շատ էին սիրում իրենց դաստիարակին: Պարզվեց, որ մանկավարժությունը նրա համար կոչում է:

Տարիներ անց ուսուցանում էր թատրոնի պատմություն, դերասանի վարպետություն, բեմական խոսք, որի համար նրան կոչեցին «բնածին մանկավարժ»: Իսկ ի՞նչը բնածին չէր նրա մոտ: Հայտնի դարձավ, որ անսպառ եռանդով լի այս կնոջը, որ արդեն տասիկ է, շարունակ նորոգ ուժեր է ներշնչում մարդկանց օգնության հասնելու իրողությունը: Օրինակ, վերջին տասնամյակում նա համատեղում էր փոքրիկ երգիչների խմբերը եւ աղեցի գոտու, եւ Արցախի երեխաների օգնության գործընթացը: Տիկին Հեքեքյանը համոզված է, որ մարդկանց օգնելով ավելի ես ուժեղանում եւ ավելի հեշտ տանում կյանքի հարվածները:

Երբ մշակույթի ու լուսավորության նշանավորների հետ եղանք Էլմիրային նվիրված հանդեսին, երեխաները մեզ զարմացրին այսպիսի մի հաշվարկով: Էլմիրան 106 տարվա աշխատանքային եւ 35 տարի 6 ամսվա ուսումնառության սաաժ ունի: Ընդամենը 141 ու կես տարվա...

Իր մեծ օժտվածության եւ անօրինակ շռայլ երազանքների դիմաց փոքրիկներ է միայն շահել ու մեծագույն երջանկությունը համարում է ամուր ընտանիքն ու երկու զավակներին. Աննային՝ բեմական խոսքի դոցենտ թատերական ինստիտուտում եւ ասմունքի հրաշալի վարպետ, որ եղբոր հետ շրջում է աշխարհով մեկ, ամենուր տանում ու հնչեցնում մեր ազգային պոետական քանքարն ու չլուծված հարցերի թնջուկը: Այուս երջանկությունը համարում է որդուն՝ կոնսերվատորիայի պրոֆեսոր Տիգրան Հեքեքյանին անգուգական երաժշտին, որի համերգներն ու «մատներից կաթող» երաժշտությունն, օտար մեծանուն մասնագետների բնորոշումով, մարդկային հոգիների համբառնում, մեդիտացիա են կատարում:

Նրա կատարումները լսելով, մենք էլ ենք գալիս այդ եզրահանգման՝ օրհնելով Աբրահամի դուստր Էլմիրա Հեքեքյանի ծնունդը: Չէ՞ որ այդ նա ամեն կերպ օգնեց խմբավար Տիգրան Հեքեքյանին եւ աշխարհի փոքրիկ հրաշք երգիչների կայացմանը: Զուր չէր, որ երեխաները նրան երգեր ու չափածո տողեր են նվիրում...

Պետք է միայն լսել ու տեսնել մանկական տարբեր ձայներով ու արտասովոր հուզական այն ծոն-աղոթքը, որ նրանք նվիրում են ուսուցչուհուն.

- Մեծն Արարիչ: Օգնիր ու պահպանիր դստերն Աբրահամի Էլմիրային, առողջություն տուր մեծ մայրիկին Հայաստանի փոքրիկ երգիչների:

Անմեղ շուրթերից ելած աղոթքմաղթանքին ի՞նչ ավելացնես...

«ԱՐՄԵՆԻԱ» ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Ցուցահանդես Ջոն Կիրակոսյանի հոբելյանին

Հայաստանի Ազգային գրադարանի նորաբաց ցուցահանդեսը, որը կազմակերպվել է թիվ 1 գիտական ընթերցասրահի աշխատողների ուժերով, նվիրված է հայ ականավոր պատմաբան եւ պետական ու հասարակական գործիչ Ջոն Կիրակոսյանի ծննդյան 70-ամյակին: Գրադարանը եղել է այն հարազատ մշակութային օջախը, որտեղ եւ որի ունեցվածքի հիման վրա ստեղծվել են նրա աշխատությունները՝ «Առաջին համաշխարհային պատերազմը եւ արեւմտահայությունը», «Բուրժուական դիվանագիտությունը եւ Հայաստանը»

Ի. 1,2, «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ»: Վերջինիս համար արժանացել է Հայաստանի պետական մրցանակի: Կազմել է «Հայաստանը միջազգային դիվանագիտության եւ սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)» ժողովածուն, ուր ամփոփված են հայկական հարցին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթեր:

Ցուցադրված են նաեւ մամուլում տպագրված նրա բազմաթիվ հոդվածները՝ «Դուք սնում եք, պրոֆեսոր», «Պատմության փաստերը ծուռ հայելու մեջ», «Նացիոնալիզմի ագրեսիվ դոկտրինան», «Խոսում են ամերիկյան մամուլի փաստերը»...

Ներկայացված են բազմաթիվ լուսանկարներ, քաղվածքներ, որոնք եւս հավաստում են, որ Ջոն Կիրակոսյանը խորը հետք է թողել հայ պատմագիտության այսպիսի կարեւոր բնագավառում, ինչպիսին քաղաքական հայագիտությունն է: Ահա մի քաղվածք նրա աշխատություններից. «Երիտթուրքերը պետք է դատապարտվեն այնպես, ինչպես գերմանական ֆաշիստները: Նրանց չարագործությունները պետք է բացահայտվեն, խարազանվեն հանուն պատմական ճշմարտության, հանուն այն բանի, որ այսօրվա ու վաղվա սերունդները ճիշտ գաղափար ունենան մեր ժողովրդի դառնությունների մասին, ճիշտ կողմնորոշվեն հայրենասիրության խնդիրներում, ըմբռնեն ժողովուրդների բարեկամության ու համագործակցության, մեր ժողովրդի համար այնքան անհրաժեշտ, սկզբունքները»:

«Նրա մասին» բաժնի նյութերից են պատմաբաններ Բ. Ուլուբաբյանի, Վ. Բարխուդարյանի, Վ. Համազասպյանի՝ Ջ. Կիրակոսյանին նվիրված հոդվածները, որոնց հարեւանությամբ ցուցադրված են անվանի պատմաբանին ուղղված Գուրգեն Շահնազի, Ալիսա Կիրակոսյանի, Մանուել Ադամյանի, Համլետ Կարոհկյանի ձոներգերը, Զորի Բալայանի «Կյանք մահից հետո» հուշագրությունը, որտեղ կարդում ենք. «Ես հաճախ եմ ինքս ինձ հարցնում, թե ինչպես կպահեր իրեն Ջոնը, եթե նրան վիճակվեր ապրել այսօր, մեր ոչ պարզ ժամանակներում: Համահայկական նավից զատված ո՞ր մակույկը կձգտեր նա: Համոզված եմ, որ նա կընտրեր ոչ թե երկպառակության խորտակիչ մակույկը, այլ՝ միավորվելու եւ պետությանը հաղորդակցվելու խորհրդանիշ դրոը»:

Բացմանը հանդես եկան Ջոն Կիրակոսյանի դասախոս, ակադեմիկոս Գեորգ Դարիբջանյանը, ուսանող, պատմաբան Աննա Սարգսյանը, գրադարանի փոխտնօրեն Ներսես Հայրապետյանը, դուստրը՝ Նոնա Կիրակոսյանը:

ՀՐԱՉՅԱ ՀՈՒԼՈՒՆՅԱՆ

digitised by A.R.A.R.@

Մարզական

Շախմատային աշխարհը նշեց իմաստուն խաղի ողջ պատմության մեջ մեծագույն վարպետներից մեկի՝ Տիգրան Պետրոսյանի 70-ամյակը:

Ծնվել է 1929-ին, Թբիլիսիում: Հանձնաժողովը 12 տարեկանում սովորեց շախմատ խաղալ: Հինավուրց խաղը Տիգրանին անչափ գրավեց. նա պատրաստ էր խաղաշախտակի առջև անցկացնել զոր ու գիշեր: Որոշ ժամանակ անց նա սկսեց հաճախել Թբիլիսիի պիոներների պալատ, որտեղ դարձավ հայտնի շախմատիստ եւ մանկավարժ Արշիլ Էբրալիձեի սանը: Շուտով հետեւեցին առաջին հաջողությունները: Երկու անգամ անընդմեջ՝ 1945 եւ 1946 թվականներին, Տիգրանը նվաճեց ԽՍՀՄ պատանիների չեմպիոնի կոչումը, դարձավ Վրաստանի չեմպիոն: Նա 1946-ին տեղափոխվեց Հայաստան: Երեք տարվա ընթացքում երկու անգամ հանրապետության չեմպիոն դարձավ: Պետրոսյանը 1949 թվականին տեղափոխվեց շախմատային Մեքքա Մոսկվա, եւ հենց այստեղ մեծ շախմատ մուտք գործեց: Տիգրան Պետրոսյանի հսկայական տաղանդը, զուգառած նրա աշխատասիրության ու աշխատունակության հետ, տալիս էր իր արդյունքը: Նա աստիճանաբար դարձավ ոչ միայն Խորհրդային Միության, այլեւ աշխարհի ուժեղագույն շախմատիստներից մեկը: 1957-ից նա ընդգրկվեց երկրի հավաքականի կազմում եւ ավելի քան քառորդ դար՝ նրա անդամն էր: Առաջ անցնելով նշենք, որ այդ տարիների ընթացքում Պետրոսյանը թիմի կազմում 9 անգամ նվաճել է համաշխարհային օլիմպիադաների, 8 անգամ Եվրոպայի չեմպիոնի կոչումը: Երբ 1959 եւ 1961 թվականներին Տիգրանը ԽՍՀՄ-ի առաջնություններում ոսկե մեդալ նվաճեց, շատերի համար պարզ դարձավ, որ նա աշխարհի չեմպիոնի կոչման ամենահարգալի թեկնածուներից է: Պետրոսյանը հուսախաբ չարեց իր երկրպագուներին. հեռավոր Կյուրասաո կղզում անցկացված հավակոիոնի կոչումը, դրանից հետո էլ մնաց երկրագնդի ուժեղագույն գրոսմայստերներից մեկը: Զրկվելով աշխարհի չեմպիոնի տիտղոսից՝ Պետրոսյանն իր որոշ «բախտակիցների» նման չկորցրվեց: Նա եւս երկու անգամ Խորհրդային Միության չեմպիոնի կոչումը նվաճեց, հաղթող դարձավ միջազգային բազմաթիվ խոշոր մրցումներում: Տիգրան Պետրոսյանի նվաճումները գնահատվել են շքանշաններով, մեդալներով, պատվոգրերով: 1960-ին նրան շնորհվել է ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետի կոչում:

Տիգրան Պետրոսյանը մնացել է շախմատի պատմության մեջ իբրեւ իմաստուն խաղի ականավոր ներկայացուցիչ: Նա իր ինքնատիպ խաղաոճով առանձնացել է բոլորից, իր ուրույն տեղն ունի շախմատային պանթեոնում:

Պետրոսյանը մշակել է վտանգավոր, հոկված տակտիկա: Նա, հավանաբար, մեր ժամանակի ամենատաղանդավոր շախմատիստն է:

Բորիս Սպասկի

Եթե Պետրոսյանն սկսի փոքր-ինչ դիմել կոմբինացիաների, նրա հետ անհնար կլինի շախմատ խաղալ:

Մաքս Էյվե

Դժվար է գերագնահատել Տիգրան Պետրոսյանի դերը հայկական շախմատի զարգացման գործում: Միջազգային վարպետներ Էդուարդ Մնացականյան, Կարեն եւ Լեւոն Գրիգորյաններ, ավելի ուշ գրոսմայստերներ Ռաֆայել Վահանյան, Արտակ Պետրոսյան, Սմբատ Լպուտյան, Ասոն Անասասյան, Կարեն Սովսիսյան, Արտաշես Մինասյան, Վլադիմիր Հակոբյան... Աշխարհի 9-րդ չեմպիոնի խաղացած պարտիաները, գաղափարները էական ազդեցություն են թողել մեր բոլոր շախմատիստների ստեղծագործության վրա: Նրա ազդեցությամբ ձեւավորված շախմատային դպրոցի շնորհիվ այժմ Հայաստանի ներկայացուցիչները լուրջ հաջողություններ են հասնում ամենախոշոր մրցումներում:

Աշխարհի 13-րդ չեմպիոն Գարրի Կասպարովը եւս նշում է, որ շատ բան է սովորել մեծն վարպետից: Նա չի մոռանում, որ առաջին անգամ երկրի սահմաններից դուրս մրցելու հենց Պետրոսյանի հետ է գնացել: Ու Հարավսլավիայում շատ է զգացել Տիգրան Վարդանովիչի աջակցությունը:

Տիգրան Պետրոսյանը դեռ շատ բան կարող էր տալ մարդկանց, բայց վաղահաս հիվանդությունն իր սեւ գործն արեց: Սիա համարյա 15 տարի է, ինչ նա մեզ հետ չէ:

Եթե ես կարողացել եմ շախմատում ինչ-որ բան ստեղծել, արդա այն ջնջել անհնար կլինի: Ժամանակը կգա, կգտնվեն շախմատային մեկնաբաններ, պատմաբաններ, հետազոտողներ, որոնք ամեն ինչ իր տեղը կդնեն եւ կորոշեն՝ իմ տեղը շախմատում: Բայց եթե ես մտածեի, որ մահիցս, ասենք, մի հիսուն տարի հետո իմ շախմատային ստեղծագործությունը ոչ մեկին չի հետաքրքրի, դա ինձ մեծ ցավ կպատճառեր:

Տիգրան Պետրոսյան

Տիգրան Պետրոսյանը մի ամբողջ դարաշրջան է շախմատի պատմության մեջ: Անկասկած, նա դրանում հատուկ տեղ է գրավում: Պետրոսյանն աշխարհի չեմպիոն էր հենց այն ժամանակ, երբ շախմատում բեկում էր տեղի ունենում, երբ ձեւավորվում էր ժամանակակից շախմատը: Պետրոսյանը շատ յուրօրինակ խաղաոճ ուներ, որի բանալին չէին կարողանում գտնել նույնիսկ խոշոր շախմատիստները:

Գարրի Կասպարով

Իմաստուն խաղի մեծագույն հանճարը

Հունիսի 17-ին լրացավ Տիգրան Պետրոսյանի ծննդյան 70-ամյակը

խել Թբիլիսիի պիոներների պալատ, որտեղ դարձավ հայտնի շախմատիստ եւ մանկավարժ Արշիլ Էբրալիձեի սանը: Շուտով հետեւեցին առաջին հաջողությունները: Երկու անգամ անընդմեջ՝ 1945 եւ 1946 թվականներին, Տիգրանը նվաճեց ԽՍՀՄ պատանիների չեմպիոնի կոչումը, դարձավ Վրաստանի չեմպիոն: Նա 1946-ին տեղափոխվեց Հայաստան: Երեք տարվա ընթացքում երկու անգամ հանրապետության չեմպիոն դարձավ: Պետրոսյանը 1949 թվականին տեղափոխվեց շախմատային Մեքքա Մոսկվա, եւ հենց այստեղ մեծ շախմատ մուտք գործեց: Տիգրան Պետրոսյանի հսկայական տաղանդը, զուգառած նրա աշխատասիրության ու աշխատունակության հետ, տալիս էր իր արդյունքը: Նա աստիճանաբար դարձավ ոչ միայն Խորհրդային Միության, այլեւ աշխարհի ուժեղագույն շախմատիստներից մեկը: 1957-ից նա ընդգրկվեց երկրի հավաքականի կազմում եւ ավելի քան քառորդ դար՝ նրա անդամն էր: Առաջ անցնելով նշենք, որ այդ տարիների ընթացքում Պետրոսյանը թիմի կազմում 9 անգամ նվաճել է համաշխարհային օլիմպիադաների, 8 անգամ Եվրոպայի չեմպիոնի կոչումը: Երբ 1959 եւ 1961 թվականներին Տիգրանը ԽՍՀՄ-ի առաջնություններում ոսկե մեդալ նվաճեց, շատերի համար պարզ դարձավ, որ նա աշխարհի չեմպիոնի կոչման ամենահարգալի թեկնածուներից է: Պետրոսյանը հուսախաբ չարեց իր երկրպագուներին. հեռավոր Կյուրասաո կղզում անցկացված հավակոիոնի կոչումը, դրանից հետո էլ մնաց երկրագնդի ուժեղագույն գրոսմայստերներից մեկը: Զրկվելով աշխարհի չեմպիոնի տիտղոսից՝ Պետրոսյանն իր որոշ «բախտակիցների» նման չկորցրվեց: Նա եւս երկու անգամ Խորհրդային Միության չեմպիոնի կոչումը նվաճեց, հաղթող դարձավ միջազգային բազմաթիվ խոշոր մրցումներում: Տիգրան Պետրոսյանի նվաճումները գնահատվել են շքանշաններով, մեդալներով, պատվոգրերով: 1960-ին նրան շնորհվել է ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետի կոչում:

Տիգրան Պետրոսյանը մնացել է շախմատի պատմության մեջ իբրեւ իմաստուն խաղի ականավոր ներկայացուցիչ: Նա իր ինքնատիպ խաղաոճով առանձնացել է բոլորից, իր ուրույն տեղն ունի շախմատային պանթեոնում:

Պետրոսյանը մշակել է վտանգավոր, հոկված տակտիկա: Նա, հավանաբար, մեր ժամանակի ամենատաղանդավոր շախմատիստն է:

Բորիս Սպասկի

Եթե Պետրոսյանն սկսի փոքր-ինչ դիմել կոմբինացիաների, նրա հետ անհնար կլինի շախմատ խաղալ:

Մաքս Էյվե

Դժվար է գերագնահատել Տիգրան Պետրոսյանի դերը հայկական շախմատի զարգացման գործում: Միջազգային վարպետներ Էդուարդ Մնացականյան, Կարեն եւ Լեւոն Գրիգորյաններ, ավելի ուշ գրոսմայստերներ Ռաֆայել Վահանյան, Արտակ Պետրոսյան, Սմբատ Լպուտյան, Ասոն Անասասյան, Կարեն Սովսիսյան, Արտաշես Մինասյան, Վլադիմիր Հակոբյան... Աշխարհի 9-րդ չեմպիոնի խաղացած պարտիաները, գաղափարները էական ազդեցություն են թողել մեր բոլոր շախմատիստների ստեղծագործության վրա: Նրա ազդեցությամբ ձեւավորված շախմատային դպրոցի շնորհիվ այժմ Հայաստանի ներկայացուցիչները լուրջ հաջողություններ են հասնում ամենախոշոր մրցումներում:

Աշխարհի 13-րդ չեմպիոն Գարրի Կասպարովը եւս նշում է, որ շատ բան է սովորել մեծն վարպետից: Նա չի մոռանում, որ առաջին անգամ երկրի սահմաններից դուրս մրցելու հենց Պետրոսյանի հետ է գնացել: Ու Հարավսլավիայում շատ է զգացել Տիգրան Վարդանովիչի աջակցությունը:

Տիգրան Պետրոսյանը դեռ շատ բան կարող էր տալ մարդկանց, բայց վաղահաս հիվանդությունն իր սեւ գործն արեց: Սիա համարյա 15 տարի է, ինչ նա մեզ հետ չէ:

Եթե ես կարողացել եմ շախմատում ինչ-որ բան ստեղծել, արդա այն ջնջել անհնար կլինի: Ժամանակը կգա, կգտնվեն շախմատային մեկնաբաններ, պատմաբաններ, հետազոտողներ, որոնք ամեն ինչ իր տեղը կդնեն եւ կորոշեն՝ իմ տեղը շախմատում: Բայց եթե ես մտածեի, որ մահիցս, ասենք, մի հիսուն տարի հետո իմ շախմատային ստեղծագործությունը ոչ մեկին չի հետաքրքրի, դա ինձ մեծ ցավ կպատճառեր:

Տիգրան Պետրոսյան

Վերջում երկու դրվագ աշխարհի 9-րդ չեմպիոնի ստեղծագործությունից:

ՊԵՏՐՈՍՅԱՆ - ՎԻՉԻԵՐ
Նից. 1974

25.♖g6 hg6 26.♕g6 ♘g7 27.♖h1 ♖f4 28.♘h5 ♖cf7 29.e6 1–0

ՊԵՏՐՈՍՅԱՆ - ՖԻՇԵՐ
Բուենոս Այրես, 1971

20.c5 ♕d2 21.♕a4 ♔f8 22.♖cd1 ♕e2 23.d6 ♕h5 24.f4 e2 25.fe5 ed1♕ 26.♖d1 ♕e5 27.♖f1 f6 28.♕b3 ♔g7 29.♕f7 ♔h6 30.de7 f5 31.♖f5 ♕d4 32.♔h1 1–0

Այս օրերին Մոսկվայում ընթանում է Տիգրան Պետրոսյանի հիշատակին նվիրված միջազգային մրցաշար, որին մասնակցում են աշխարհի տարբեր երկրների 10 հանրահայտ շախմատիստներ՝ աշխարհի կրկնակի չեմպիոնի վաղեմի բարեկամ-մրցակիցներ:

Պետրոսյանի 70-ամյակը մեծ շուքով նշվեց Երեւանում: Հանրապետության շախմատիստներն ու շախմատասերները, հասարակայնության ներկայացուցիչները նախ ծաղկեպսակներ դրեցին նրա հուշարձանին, ապա հանդիսավոր ցերեկույթ տեղի ունեցավ նրա անունը կրող շախմատիստի կենտրոնական տանը: Հանդիսության մասնակիցները հուշեր պատմեցին մեծ շախմատիստի մասին, ներկայացրին նրա ստեղծագործությունը:

Անցկացվեց առագ շախմատի մրցաշար՝ նվիրված Տիգրան Պետրոսյանին: Եզրափակիչ փուլում հանդես եկան 32 շախմատիստներ: Հաղթեց գրոսմայստեր Սմբատ Լպուտյանը, որը 9 հնարավորից 7,5 միավոր վաստակեց: Երկրորդ տեղը գրավեց Անդրանիկ Մաթիկոզյանը, որը եւ մնաց կես միավորով: 6-ական միավորով հաջորդ տեղերը գրավեցին Գաբրիել Սարգսյանը, Կարեն Ասրյանը, Սելիմեթ Խալիլյանը:

ԽԱՉԲԱՌ

Նախորդ համարում տպագրված խաչբառի ղեկավարները

Ուղղահայաց

1. Օլիգոպոն 2. Ունիա 3. Շարաքի 4. Սալամի 5. Գաթա 6. Արեւորդիկ 9. Թերթ 10. Ժուժկալ 12. Ցարս 17. Սքնասար 18. Արտաշես 19. Կանգավոր 21. Արքանար 25. Կանյուս 26. Թանանյան 28. Վճարունակ 30. Արեւ 32. Գիտ 33. Օսիրիս 34. Տնկարկ 39. Առամ 41. Սուրկ

Հորիզոնական

7. Ալբանյան 8. Քարաքերդ 9. Թաթա 11. Ագաթ 13. Գոդ 14. Յակուլով 15. «Արուս» 16. «Բոհեմա» 20. Սաարիկ 22. Արմաղան 23. Փաձրակ 24. Շահնազար 27. Սեծաձոր 29. Հազարու 31. Արգիճի 35. Սատ 36. Սարուխան 37. Քարի 38. Շամի 40. Կանո 42. Սարամարիկ 43. Ցրաշուշան



Ուղղահայաց

1. Հիվանդագին վիճակ, որը նման է ֆի: 2. Գյուղ Հայաստանում, Ալավերդուց հարավ-արեւելք: 3. Հայոց թագավոր: 4. Օգտագործած ջրի չափը հաշվառող սարք: 5. Հացազգի բույս, տարեկան: 6. Հայ լեզվաբան: 9. Հայ երկրաբան, ուսումնասիրել է Հայաստանի պալեոզոյի բրածո ֆաունան: 13. Ըստ հունական դիցաբանության ռազմիկ կին: 14. Հոգեկան հիվանդություն, ընկնավորություն: 16. Ծաղկի կենտրոնում գտնվող իգական օրգան: 17. Հայ միջնադարյան հոգեւոր երգ, օրհներգություն: 22. Գյուղ Բագումի լեռնաշղթայի հարավային սահմանին: 23. «Մնաս բարով, Գյուլսարի» վիպակի հեղինակը արժանացել է ՍՍՀՄ պետական մրցանակի: Ո՞վ է հեղինակը: 25. Մարդկանց մահաղաղժի ենթարկելու հարմարանք: 28. Բույսերի վնասատուների դեմ պայքարող եւ հիվանդությունները կանխող դեղամիջոց: 29. Ֆրանսիացի աշխարհահռչակ մոդելյոր: 30. Հրահեղուկ զանգված: 32. Խոշոր բնակավայր:

Հորիզոնական

7. Արյան սպիտակ գնդիկներ: 8. Այս գիտնականի ղեկավարությամբ Երեւանի համալսարանում բացվել է երկրաբանության ֆակուլտետ: 10. Ոչխարի տեղական ցեղ: 11. Քաղաք Հայաստանում: 12. Հայ քիմիկոս, աղաթթվի ստացման նոր եղանակի ստեղծողը: 15. Ճարտուղղք: 18. Քաղաք Հայաստանում: 19. Հայ քիմիկոս: 20. Գեղարվեստական ստեղծագործության տեսակ, որը հիմնված է ֆանտաստիկ չափազանցությունների եւ սուր, անսպասելի հակադրությունների վրա: 21. Ծաղկի թուփ: 24. Հայ քիմիկոս, զբաղվել է դեղանյութերի սինթեզման եւ դրանք մարդու օրգանիզմի վրա ներգործության ուսումնասիրությամբ: 26. Նահանգ ԱՄՆ-ի հյուսիս-արեւմուտքում: 27. Ցիանաթթվածնական թթվի աղ: 31. Հայ ֆիզիոլոգ: 33. Սոլժենիցինի ստեղծագործությունը «Արշիպելագ ...»: 34. Ս. Ամենի «Հեղնար աղբյուր» ստեղծագործության հերոսներից: 35. Թաղամաս Փարիզում: 36. Պղնձի դարի հնավայր Երեւանի հարավ-արեւմտյան մասում:

Կազմեց է ԱՎԵՏԻՍՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

Օրվա հեռուստերով

ՀԱԿԱՍԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Վ. Օսկանյան. «Ադրբեջանամե՛ս կամ հայամե՛ս լինելով հնարավոր չէ լուծել Ղարաբաղի խնդիրը»

ԵՐԵՎԱՆ, 23 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏՈՊԱՆ: «Արդեն իսկ Եվրոպան կայացրել է իր որոշումը եւ Կովկասը համարում է Եվրոպայի մի մասը: Նրանք լավ են պատկերացնում, որ այլապես Եվրոպան չի լինելու ամբողջական, եւ նրա կայունությունն ու անվտանգությունը հնարավոր չի լինի աղահովել երկարաժամկետ առումով», «Ազատություն» ռադիոկայանին տված հարցազրույցում ասել է ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանը՝ անդրադառնալով Լյուքսեմբուրգում կնքված Անդրկովկասի երեք հանրապետությունների եւ Եվրամիության միջեւ համագործակցության մասին պայմանագրին:

Անդրադառնալով ղարաբաղյան հակամարտության կարգավորման խնդրին եւ մասամբ համաձայնելով ռադիոկայանի թղթակցի կարծիքին, Օսկանյանը նշել է, որ իրոք, Մեծ Բրիտանիան ավելի ադրբեջանամետ է, Գերմանիան ավելի հակված է դեպի Վրաստանը, Ֆրանսիան դեպի Հայաստանը: «Սա գուցե նաեւ որոշ պատմական արմատներ ունի, բայց, ըստ իս, այսօր այս երկրներն այդ խնդիրն ավելի ընդհանուր են դիտարկում: Նրանց հետաքրքրում է տարածաշրջանի կայունությունը, որովհետեւ այդ երկրները տնտեսական շահեր ունեն Կովկասում: Նրանք, ինչպես նաեւ ԱՄՆ-ը լավ են պատկերացնում, որ այդ շահերը կկարողանան պաշտպանել միայն Կովկասում երկարաժամկետ ու կայուն խաղաղություն հաստատվելուց հետո: Նրանք նաեւ լավ են պատկերացնում, որ միայն ադրբեջանամետ կամ հայամետ լինելով հնարավոր չէ այսօր Լեռնային Ղարաբաղի հարցը լուծել, եւ այսօր խոսքն իսկապես փոխզիջումային տարբերակների մասին է»:

Խոսելով վերջերս հրադադարի խախտման կապակցությամբ դիմակայության գոտում ԵԱՀԿ դիտորդական առաքելություն տեղակայելու մասին ՀՀ ԱԳՆ առաջարկության մասին Օսկանյանը նշել է, որ Ադրբեջանը դեռեւս չի պատասխանել այդ առաջարկին, եւ որ ինքը ընդհանրապես կասկածում է, թե պատասխան կլինի: Ըստ Օսկանյանի, հրադադարի այս խախտումից եւ դրան հաջորդած Ադրբեջանի հայտարարություններից ակնհայտ երեւում է, որ Ադրբեջանն այս սադրանքն օգտագործում է միջազգային հանրության ուշադրությունը Լեռնային Ղարաբաղի խնդրի վրա հրավիրելու եւ այդ ուշադրության ներքո քաղաքական հարցեր բարձրացնելու նպատակով: «Սա է հիմնականը, եւ այդ իսկ պատճառով մենք գտնում ենք, որ եթե այնտեղ մշտական դիտորդներ լինեն, նման սադրանքներն առագայում հնարավոր կլինի կանխել», ասել է Օսկանյանը:

1998-ին նկատվել է դիտավորյալ սպանությունների, սպանության փորձերի նվազում

ԵՐԵՎԱՆ, 23 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՀՀ գլխավոր դատախազության հունիսի 23-ի կոլեգիայի նիստը նվիրված էր 1998 թ. դիտավորյալ սպանությունների բացահայտմանը եւ քննության նկատմամբ իրականացված դատախազական հսկողության վիճակի ուսումնասիրության արդյունքներին:

Ներկայացնելով անցյալ տարի հանրապետությունում գրանցված հանցագործությունների դեմքերը, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ժիրայր Խառատյանն ասաց, որ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ նվազել են դիտավորյալ սպանությունների, սպանության փորձերի դեմքերը, նկատելի է դրանց բացահայտման բարելավման միտում: Ըստ Ժ. Խառատյանի, անցյալ տարի գրանցված 145 դեպքերը կազմում են հանցագործությունների ընդհանուր թվի 1,3 տոկոսը, քրեական հետախուզության գծով գրանցված հանցագործությունների 2, իսկ ծանր հանցագործությունների 7,9 տոկոսը: Նշվեց, որ արձանագրված այդ 145 դեպքերից բացահայտվել է 125-ը:

Կոլեգիան անդրադարձավ կանանց, երեխաների, ինչպես նաեւ հոգեկան հիվանդների կողմից կատարված հանցագործություններին, վերջիններիս, որպես անմեղսունակ անձանց, հասվառումից հանելու խնդրին:

ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանն ասաց, որ չի կարելի անմեղսունակ անձի կողմից կատարված արարքը հանցանք համարել, բացակայում է հանցագործության սուբյեկտը եւ առաջարկեց միջնորդագիր ներկայացնել առողջապահության նախարարին: Նրանց բուժման, հասարակությունից մեկուսացնելու համար:

ՆԳ մարմինների, դատախազության ու քննիչների համագործակցությունն ավելի արդյունավետ դարձնելու վերաբերյալ իր տեսակետն արտահայտեց ՆԳ փոխնախարար Ռուդիկ Հովակիմյանը:

Կոլեգիայի նիստում Երեւանում անցյալ տարի գրանցված դիտավորյալ սպանությունների, սպանության փորձերի հաշվետվություն ներկայացրեց քաղաքի դատախազ Արամ Թամազյանը: Զեկուցումներով հանդես եկան գլխավոր դատախազության վարչությունների ղեկավարներ:

ՀԱՍԱՐՈՍ

Շեւարդնաձե. Եվրոպան պետք է լուրջ ուշադրություն դարձնի աբխազական հակամարտությանը

ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳ, 23 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ՓՐԱՅՍ ՆՅՈՒՍ: Վրաստանի նախագահ էդուարդ Շեւարդնաձեն երեքշաբթի օրը Եվրոպական հանրակցությանը կոչ արեց աբխազական հակամարտությունը դարձնել «լուրջ ուշադրության օբյեկտ»:

Եվրամիության հետ Անդրկովկասի երկրների գործընկերության ու համագործակցության համաձայնագրի պաշտոնական հրապարակման արարողության ժամանակ նախագահ Շեւարդնաձեն ասաց, որ Վրաստանը պաշտպանեց «համոզման ու հարկադրման» զուգակցումը Բալկաններում այն պատճառով, որ «Աբխազիայում իր աչքերով էր տեսել կոսովյանի նման ողբերգություն»:

Վրաստանի նախագահը նշեց, որ վերջերս ինքն առաջարկել է ներկայացուցչական միջազգային խորհրդաժողով անցկացնել աբխազական հիմնախնդրի շուրջ:

Շեւարդնաձեի խոսքերով, «եթե առաջիկա 2-3 ամսում բեկում տեղի չունենա աբխազական հակամարտության կարգավորման մեջ, Վրաստանը միջազգային հանրակցությանը կառաջարկի այդ խորհրդաժողովի կոնկրետ նպատակներն ու խնդիրները:

Հ. Ալիեւ. «Ադրբեջանի իշխանության քարավանը հաջողությամբ առաջ է գնում»

ԲԱՔՈՒ, 23 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Նախագահ Հեյդար Ալիեւի ինքնազգացողությունը լավ է: Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման, այդ մասին հայտնել է ադրբեջանական պետության ղեկավարն ինքը, այսօր երեկոյան Բաքվում ընդունելով ԱՄՆ-ի վարչակազմի բարձրաստիճան պատվիրակությանը, որը գլխավորում է Կասպիական տարածաշրջանի զարգացման հարցերի գծով ԱՄՆ-ի հատուկ ներկայացուցիչ Ռիչարդ Մորնինգսթարը: Մամուլի աշխատողների ներկայությամբ այս թեմայով Ադրբեջանի նախագահին խոսել են դրդել վերջին ժամանակներս ընդդիմադիր մամուլում հաճախացած այն հաղորդումները, թե պետության ղեկավարի առողջությունն օրհասական է: Այդ հրապարակումները համարելով «սահող եւ անբարոյական», Հեյդար Ալիեւն ասել է, թե ինքն առողջ է եւ պատրաստ է աշխատել էլ ավելի մեծ եռանդով: «Ադրբեջանի իշխանության քարավանը հաջողությամբ առաջ է գնում», հայտարարել է նա:

Ռուս խաղաղապահները Կոսովո կփոխադրվեն երկուշաբթի օրը

ՄՈՍԿՎԱ, 23 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Կոսովո ռուս խաղաղապահների փոխադրումը կսկսվի երկուշաբթի՝ հունիսի 28-ին: «Կոսովոյում ռուսական զորակազմի առաջին հանձնումը տեղի կունենա արդեն երկուշաբթի օրը»: Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի, այս մասին այսօր լրագրողներին հայտնել է Ռուսաստանի պաշտպանության նախարար Իգոր Սերգեեւը, որը «Արեւմուտք-99» զորավարժությունների շրջանակներում այցելել էր ռազմաօդային ուժերի եւ հակաօդային պաշտպանության Մոսկովյան օկրուգի հրամանատարական կետ:

«Արեւմուտք-99» զորավարժությունները ՆԱՏՕ-ի ուշադրության կենտրոնում են

ՄՈՍԿՎԱ, 23 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՆԱՏՕ-ն ակտիվ հետախուզական աշխատանք է ծավալել ռուսաստանյան զինված ուժերի կողմից «Արեւմուտք-99» խոշորածավալ հրամանատարաշտաբային զորավարժությունների անցկացման կապակցությամբ: Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման, այս մասին այսօր հայտարարել է Ռուսաստանի ռազմաօդային ուժերի գլխավոր հրամանատար, ավիացիայի գեներալ-գնդապետ Անատոլի Կոռնուկովը:

Նրա ասելով, «ՆԱՏՕ-ի հետախուզության գործունեությունն առանձնապես ինտենսիվ է Բարենցի ծովի շրջանում, որտեղ զորավարժություններ է անցկացնում Ռուսաստանի Հյուսիսային նավատորմը»: Հետախուզություն է տարվում նաեւ Լեհաստանի տարածքից, որտեղ բազավորված է ՆԱՏՕ-ի հետախուզական օդուժը:

Խոսելով հրամանատարաշտաբային զորավարժությունների ընթացքի մասին, գեներալ-գնդապետը նշել է, որ մշակվում են արեւմտյան տարածաշրջանում ռազմական գործողություններ վարելու զանազան ուսումնական տարբերակներ, այդ թվում՝ Բելառուսի տարածքին օդային հարվածը դիմագրավելու ուսումնական գործողություններ:

ARMENTEL

ԱՐՄԵՆՏԵԼԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է

Մ Ր Ց Ո Ւ Մ

Արմենտելն՝ իր օբյեկտների եւ բենքերի շուրջօրյա պահպանությունն իրականացնելու համար հայտարարում է տենդեր: Մրցութային հանձնաժողովին պետք է ներկայացվեն հետեւյալ փաստաթղթերը.

1. Լիցենզիա նման ծառայություն իրականացնելու համար:
2. Պահպանությունն իրականացնող անձնակազմի զենքով աղահովվածության վերաբերյալ տվյալներ:
3. Եթե կազմակերպությունը արդեն իսկ իրականացնում է այդպիսի ծառայություն, ապա սպասարկվող օբյեկտների ցանկը:
4. Մեկ պահակակետի համար պահանջվող զումարի չափը:

Առաջարկությունները ներկայացնել մինչեւ հուլիսի 2-ը, ժամը 12:00-ը, հետեւյալ հասցեով
Երեւան, Սիարոնյան 2, 6-րդ հարկ, 605 սենյակ, գլխավոր վարչական տնտեսի ընդունարան, հեռ. 28-92-04, 28-10-52:

ԱՐՄԵՆՏԵԼ ՀՁ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Հայտարարություն

Հայտնում ենք, որ ս. թ. հունիսի 23-20-ը, ժամը 10-17-ին, արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի հայկական ընկերությունում (ԱՕԿՍ) գործելու է «Իրան. զարմանահրաշ աշխարհ» խորագրով գեղանկարչական ցուցահանդես, որը հայ երեխաների տպավորությունների ու հայացքների արդյունքն է Իրանի վերաբերյալ:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ ՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆՈՒՄ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲԱԺԻՆ

ՀԵՌՈՒՍՏԱԾՐԱԳՐԵՐ

24 հունիս

ՀԱՅԿ
9.00 Հայկոր
9.20 Բարի լույս, Հայաստան
10.20 Հեռուստաֆիլմ «Սոխուորը»
11.15 Հենց այնպես
11.30 Արտակարգ պլան
11.40 3-րդ խաղակետ
12.05 Պ. Սոֆիսկոյը եւ «Սուսկվայի վիրտուոզները» երեւանում. մենակատար Արամ Դավթյան
12.25 02
13.00 Հայկոր
13.15 Միասին («Միր»)
17.00 Հայկոր
17.20 Սանկտ-Պետերբուրգ ծոցակ
18.00 Հեռուստաֆիլմ «Սոխուորը»
19.00 Խոշոր շահում
19.15 Բանուգործ
19.30 Հեռուստաֆիլմ «Շների աշխարհը» (վերջին սերիա)
20.00 Բժիշկ եւ հիվանդություն
20.25 Արտակարգ պլան
20.35 Տուեստերկի
21.00 Հայկոր
21.30 1 լուր
21.40 20 վայրկյան
21.45 Այսօր
22.10 Գ/Ֆ «Բոստ»
00.00 Հայկոր
00.20 Ուշ երեկոյան
Արբանյակային հեռարձակում
02.00 Հեռուստաֆիլմ «Իսկ երկրորդ մայրը»
03.00 Բարի լույս, Հայաստան

ՄՇԱԿՈՒՅԹ
19.00 Մուլտֆիլմ «Ոտքոտ»
19.20 Սանկտկան հանդեպ
19.30 Տեսաֆիլմ «Աշխարհների Ինքնորդ պլան»
20.00 Հանդեպ
20.30 Լուրեր
21.05 Սերիալ «Ես կնկատեմ Մանիքենը» (4-րդ մաս)
21.55 Սիրելի զմփնձանս
22.00 ARTաշխարհ
22.30 Գեղֆիլմ «Հողը»
00.30 Լուրեր

ԳԼԽ
09.00 Տոնար
11.00 Գ/Ֆ «Հրեշակների ցասումը 2» (6-րդ մաս)
19.00 Մուլտ
19.30 Սուրհանդակ
19.50 Սամուլի խոսնակ
20.00 Առաջին անգամ եթերում. Սրա վահանը «վանաստիկ է» վավերագրական ֆիլմը
20.30 Ստյարեզ
21.10 Հրապարակ
21.30 Սուրհանդակ
22.00 Գ/Ֆ «Ասպետները չի վնասի» մելոդրամա
23.30 Սուրհանդակ
00.00 Մեկնոր
00.05 Մի անգամ
00.10 Գիշերային կինոսրահ. ծարաֆիլմ «Փա խուստն անհնար է»
02.00 VIDEOART PLUS. «Քաղաք անհայտում»
02.30 Սուրհանդակ

1
7.00 Բարի առավոտ
10.00 Նորություններ
10.15 Սերիալ «Հանուն սիրո»
11.30-15.45 Բիզնես TV
16.00 Նորություններ
16.15 Սերիալ «Շենքարդ Հարին»
16.45 Cinema կամ կախարդական աշխարհ
17.00 Սեզամ փողոց
17.30 Մինչեւ 30 եւ բարձր
18.00 Սերիալ «Հանուն սիրո»
19.00 Նորություններ
19.15 Գուսանի մեղեդին
19.45 Սյունեղ հինգ
20.05 «Ռոմանի հիշեմ...»
20.45 Սերիալ «Շենքարդ բալենին»
21.45 Բարի գիշեր, երեխաներ
22.00 Ժամանակ
22.40 Ցերեկ
22.50 Գ/Ֆ «Քաղ» (դերերում Ի. Մեսիգկայա, Ա. Սրոյուլով)
00.40 Ա. Գուդոն «Սոլոությունների հավաքածու»
01.10 Նորություններ
01.25 Գ/Ֆ «Բուսն երկուշաբթի» (դերերում Սթինգ, Մ. Գրիֆիթս, Շ. Բրոն, Տ. Լ. Ջոնս)

ՌՏՎ
8.00-10.45 Բարի լույս, Ռուսաստան
8.20 Բլոգի շուրջերին
8.45 Հեռուստախաղ «Հաղորդումների ծրագիր»
10.15 Հերթապահ բժշկական
10.45 Ադրանքներ փոստով
11.10 Սերիալ «Միլեդի»
12.00, 15.00, 18.00, 21.00, 01.50 Լուրեր
12.35 Սերիալ երեխաների համար «Փոքրիկ բա փաստաբանը»
13.30 Իմ ընտանիքը
14.30 Խանութ բազմոցի վրա
15.30 Սերիալ «Մեռոնգլա»
16.25 Սերիալ «Հարուստներն ու նշանավորները»
17.15 Երաժշտություն, երաժշտություն...
17.25 Սերիալ «Առաջին հանդիպումներ»
18.30 Աշխարհ
19.00 Հոմեոպատիա եւ առողջություն
19.05 Նիվելա. գեղեցկության գաղտնիքները
19.10 Ալիսա Ֆրեյնդլիխը, Սարգսյանը Վերոնիկա Կարան, Իգոր Լեխան, Ալեքսանդր Ալեքսանյանի «Սիրել» ֆիլմում
20.30 Սերիալ «Այդ. տարոն նախարար»
21.40 Մանրամասներ
21.55 Երկու դաշնամուր
22.45 Կինոյի ժամ. Եվգենի Լեոնով Գլադիսեսը «Ֆուֆել» ֆիլմում
00.40 Երգիչ տենորներ հեռուստաեթերի դասարանի կնաջը
01.35 Հերթապահ բժշկական
02.20 Երկխոսություններ ծկնորսության մասին

«ՀԱՅԿ» ԷՍ ՏԵՍԵԼ «Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի ձեռնարկություններ» տեղեկագիրքը: Վաճառվում է «Նոյյան տապան» (Հանրապետության հրապարակ), «Ավասա» (Աբովյան 25), «Русская книга» (Փ. Բուզանդի 1) գրախանութներում եւ մետրոյի «Բարեկամություն» կայարանի մուտքի մոտ գտնվող կրպակում:

«Ազգ» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արգավանդ 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Պատվեր 1074 Տպաքանակը՝ 4000 Ստորագրված է տպագրության՝ 23.06.1999 Գինը՝ 100 դրամ

digitised by A.R.A.R.@